

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

7 ՕԳՈՍՏՈՍ, ԶՈՐԵՔԵԱԲԹԻ

ԺԱՄԱՆՈՒՄ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍ

Ա վարտելով Ուրուգվայի հայ ժողովրդին տված մեկօրյա այցելությունը, Վեհափառ Հայրապետը Օգոստոսի 7-ի առավոտյան ժամը 09.45-ին ժամանեց Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս Այրես:

Օղանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Արգենտինայի Հայոց Սոաջնորդ Գիսակ Եպս. Մուրադյանը, Բրաչիլիահայոց Սոաջնորդ Տաթև արքեպս. Ղարիբյանը, Արգենտինայի Հանրապետության նախագահ Կարլոս Մենեմի ներկայացուցիչ, կրոնից գործոց պետքարտուղար Անխել Սենտենոն, Արգենտինայում ՀՀ դեսպան Վահան Տեր-Ղևոնդյանը, Կենտրոնական Վարչության ատենապետ Էդուարդո Քարավյանը, կապմակերպությունների, միությունների բազմաթիվ անդամներ:

Օղանավակայանի պատվո սրահում, ընդունելությունից և մամուլի ներկայացուցիչներին տված հարցազրույցից հետո, նախագահի ներկայացուցիչ Անխել Սենտենոն Վեհափառ Հայրապետին հանձնեց Արգենտինայի պետության պատվո հյուրը լինելու վկայագիրը: Խորապես զգացված հարգալից այս վերաբերմունքից, Վեհափառ Հայրապետը իր քերթ զգացումները հայտնեց արգենտինյան կառավարության նման քայլի նկատմամբ, որ կրկին անգամ փաստում է երկու ժողովուրդների բարեկամությունը: Սպա Նորին Սրբությունը առաջնորդվեց Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցի:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա-ԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ Հ. 878


Բուենոս Այրես, 28 Հուլիսի 1996

Նկատի ունենալով, որ 1996թ. Օգոստոսի 7-15-ը Հանրապետություն կայցելի Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Գարեգին Ա. -ը, և Նկատի ունենալով,

El Poder Ejecutivo
Nacional

Secy

879



DECRETO 879 M. 149.

BUENOS AIRES, 26 JUL. 1996

VISTO la visita a la República de Su Santidad KAREKIN I, Patriarca Supremo y Católicos de Todos los Armenios, entre los días 7 y 15 de agosto de 1996, y

CONSIDERANDO:

Que es motivo de especial satisfacción para el GOBIERNO ARGENTINO la permanencia en el país de tan distinguida personalidad.

Que la presente medida se dicta en uso de las atribuciones emergentes del artículo 99, inciso 1 de la CONSTITUCION NACIONAL.

Por ello,



EL PRESIDENTE DE LA NACION ARGENTINA

DECRETA:

ARTICULO 1º.- Declárase Huésped de Honor del Gobierno Argentino a Su Santidad KAREKIN I, Patriarca Supremo y Católicos de Todos los Armenios, mientras dure su permanencia en el país.

ARTICULO 2º.- Comuníquese, publíquese, dese a la Dirección Nacional del Registro Oficial y archívese.

DECRETO Nº 879



2

01.78.

SOL
146

SECRET. LEGAL Y TECNICA
MANUSCRITA DE LA NACION

GUINZ DI TELLA
Ministro de Relaciones Exteriores,
Comercio Internacional y Guiz

որ Արգենտինայի Կառավարության համար առանձնակի զոհունակության առիթ է այնքան մշանավոր անձնավորության ներկայությունը երկրում,

որ սույն որոշումը բխում է Ազգային Սահմանադրության 99-րդ հոդվածի Ա կետի ընծայած իրավունքներից.

ԱՐԳԵՆՏԻՆԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հոդված 1. Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա-ին հռչակել Արգենտինյան Կառավարության Պատվո Հյուր՝ երկրում Նորին Սրբության կեցության ընթացքում:

Հոդված 2. Հաղորդել, հրապարակել, հանձնել Պաշտոնական Գրանցման Ազգային Վարչության և արձանագրել:

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ Հ. 879

Ստորագրություններ՝

Կառլոս Ս. Մենես՝ Հանրապետության Նախագահ
Գիո Դի Տելլա՝ Արտաքին Գործերի, Միջազգային Առևտրի և Պաշտամունքի Նախարար

**ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ԵՎ ՔԱՐՈՉ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
 ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ**



Մեծաթիվ մի բազմություն էր հավաքվել Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շրջափակում, որը փակել էր նաև Արմենիա կոչվող ամբողջ փողոցը: Իրենց Հոգևոր Հորը դիմավորելու էին եկել թեմի հոգևոր դասը, Բուենոս Այրեսում քույր եկեղեցիների հոգևոր առաջնորդները, բոլոր

վարժարնների աշակերտները, սկսուտական խմբերը, կապմակերպությունների, միությունների անդամները և հարյուրավոր հավատացյալ հայորդիներ:

Վեհափառ Հայրապետը ամպիոփանու ներքո, ժողովրդի խոռոներամ բազմության միջից անցնելով, «Հրաշափառ»-ով մուտք գործեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի:

Գոհաբանական աղոթքից հետո բարիգալստյան խոսքով հանդես եկավ Առաքնորդ Գիսակ եպս. Մուրադյանը՝ հրավիրելով Նորին Սրբությանը իր օրհնությունները քաշխելու հավատացյալ ժողովրդին:

Վեհափառ Հայրապետը մեծ հուլումով գոհություն հայտնեց Ամենակալ Աստծուն, որ այսպիսի խանդավառ մի ժողովուրդ է բնակվում Մայր Հայրենիքից հեռու այս ափերում: Այս Նորին Սրբությունը, խոսքն ուղղելով ժողովրդին, շեշտեց այն իրողությունը, որ այս երկիր գաղթական եկած ժողովուրդը այսօր կատարյալ և լիարժեք քաղաքացի է, որը պատիվն է ամբողջ հայության:

Աղոթքից և քարոզից հետո հավատացյալ ողջ բազմությունը աջահամբույրով իր համակրանքն ու հավատարմությունը հայտնեց Հայոց Հայրապետի հանդեպ:

ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՁԸ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Միրելի հոգևոր եղբայրներ և հավատացյալ, հավատավոր, հավատակից եղբայրներ ու քույրեր,

Այս պահը իմ կյանքի մեջ յուրահատուկ նշանակություն ունեցող և անջնջելի հետք թողնելու կոչված պահ մըն է: Այդպես կզգամ և ատոր համար խոնարհագույն գագցումով ծունկի կու գամ հոգիս մեջ Աստուծո առաջ և ձեզի իմ խոսքը ուղղելն առաջ իմ բառերը խունկի նման դեպի երկինք կքարձրացնեմ ըսելու համար՝ «Փա՛ռք և գոհություն Քեզ, Հայր Երկնավոր, որ ինձի մեծ շնորհք ըրիր, պատիվ ընծայեցիր այս քու ժողովուրդիդ՝ Արժանթիցի մեջ ապրող, Բուենոս Այրեսի մեջ հատկապես ապրող քու զավակներուդ հետ ինձի աղոթակից դարձնելու համար»: Առաջին խոսքս, հետևաբար, Աստուծո ուղղված խոսք մըն է, գոհության, երախտագիտության և փառատվության՝ վասն ձեր բոլորիդ: Փա՛ռք քեզ Աստված, որ այսպիսի ժողովուրդի ծառան ըրիր ինձի:

Տեսա ձեր հավատքի հեղափոխումը: Տեսա ձեր ընդառաջումին անկեղծությունը: Տեսա ձեր սիրո գեղումը: Եվ այսօր, այս խորանին առջև, փառք կուտամ Աստուծո, որ ձեզ նման հավատքը կենդանի պահող և ազգային ինքնության և արժանապատվության գիտակցությունը վառ պահող ժողովուրդի մը ծառայելու կոչված եմ:

Միրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր,

Մենք բոլորս, երկնքի տակ ո՛ր ալ որ գտնվինք, Մայր Հայրենիքի, մեր բնօրրանին, մեր ծաղկած երկրին՝ Հայաստանի և Արցախի մեջ և թե աշխարհի չորս անկյունները տարտղնված, ուր ալ ըլլանք, ի՛նչ դավանանքի ալ որ պատկանինք, ի՛նչ գաղափարի ալ որ հավատանք,

ի՛նչ դասակարգի այ որ անդամ ըլլանք, այսօր բոլորս ալ գիտակցութեան մօտ հոսանքի մը մեջեն կանցնինք: Այսօր՝ 1990-ական թվականներուն, չե՛նք ալլես, ինչ որ էինք այս դարու սկզբին: Մեր կյանքի մեջ մենք զմեզ բախտավորագո՛ւյն սերունդը զգալու բնական պարտականութիւնը ունինք:

Մեր հայրերը երազ մը ունեին, տեսիլք մը ունեին, իղձ մը՝ հաճաքական իղձ մը ունեին, տեսնելու իրենք զիրենք իբրև աշխարհի ազգերեն մեկը՝ սեփական անկախ պետութեամբ դիմագծված: Երազեցին, տագնապեցան, պայքարեցան, մահատակվեցա՛ն, բայց չկրցան տեսնել: Իրենց աչքերը հիմա մեր աչքերուն մեջ կոնեն և կդիտեն մեզ: Մենք բախտավորագո՛ւյն սերունդ ենք, որ կրցանք տեսնել այն, ինչ որ մեր սիրտը, հաճաքական սիրտը սպասեց տեսնել. մեր ժողովուրդի, հայոց հազարամյակներ ապրած ժողովուրդի ազատ ու անկախ ապրելու գոյավիճակը յուրահատուկ սեփական պետութեան, հանրապետութեան, ինչ որ ահա՛վասիկ իրագործվեցավ հինգ տարիներէ ի վեր և կպատրաստվինք մեկ ամիս ետքը տոնելու հինգերորդ տարեդարձը մեր մօտ ու ազատ ու անկախ հանրապետութեան:

Սիրելիներ,

Այս դարը՝ քսաներորդ դարը, սևով, սուգով, արյունով սկսավ հայոց դարավոր պատմութեան շղթային մեջ: Ս. Էջմիածնեն՝ Մայր Աթոռէն ճամբա ելլելէ առաջ, մախորդ գիշերը ես կարդացի ասկէ յոթանասունհինգ տարիներ առաջ գրված Մեծի Տանն Կիլիկիո աստանդակաւ կաթողիկոս Սահակ Բ Խապայանի գիրը՝ «Ըն՞ երթաս, ժողովուրդ հայոց»: Երբ տեսավ Սուրիո, Լիբանանի ափերէն, անապատներէն ժողովուրդին դեպի Հարավային Ամերիկա գալը, այն ատեն իր մտքին մեջ Հարավային Ամերիկան ի՛նչ էր: Տակավին չէր այն ինչ որ եղավ անցնող յոթանասունհինգ տարիներու ընթացքին: «Ո՛վ ժողովուրդ, - ըսավ (գրված է, և պիտի կարդամ ձեզի, և պիտի ուզեմ, որ մամուլի մեջ ալ տպվի ատիկա), - յո՞՞ երթաս. հաց փնտրելու կերթաս, միթէ այստեղ հաց չկա՞, խաչ փնտրելու կերթաս, խաչը միշտ հոգվոյդ վրա է, ուսերուդ վրան է, ինչո՞ւ կերթաս»: Այսօր, Սահակ Կաթողիկոսին մախորդ հաշորդներէն մեկը և այժմ Ամենայն Հայոց մախամեծար Աթոռի գահակալը՝ ես, այսօր փա՛ռք կու տամ Աստուծո, որ մեր ժողովուրդը եկավ այս երկիրը իբրև գաղթական, բայց չմնաց գաղթական: Հոգեբանորեն փոխվեցավ. իր ազգային ինքնութեան և արժանապատւութեան՝ քրիստոնեական հավատքի ներգործութեան, ազդեցութեան ներքէ դարձավ պատվարեր քաղաքացի, այսինքն՝ շրջափոխվեցավ:

Գաղթական եկողը այստեղ դարձավ շինարար, դարձավ հավատարիմ քաղաքացի, և այսօր, երբ առաջին անգամ կգտնվիմ ես այս օրհնյալ երկրին վրա, կօրհնեմ ամբողջ Արժանթինը, անոր վսեմաշուք մախագահը, Բուենոս Այրես այս մայրաքաղաքը, բոլոր պետական-կառավարական, հանրային սպասավորները և մեր սիրեցյալ ժողովուրդը և իմ շնորհակալութիւնը, իմ գնահատանքը կհայտնեմ ձեր մկիրյալ առաջնորդին՝ Տ. Գիսակ սրբազանին, ազգային կենտրոնի մարմնին, մեր

ազգային թեմական իշխանության և ամբողջ ընդունելության հանձնախումբին, բոլոր մեր համայնքային կազմակերպությանց անխտիր և ման մեր շնորհակալությունները կհայտնեմ մեր քույր Եկեղեցիներու ներկայացուցիչներուն:

(Այստեղ Վեհափառ Հայրապետը անգլերեն լեզվով շնորհակալության ու գնահատանքի խոսք հարուստ քրիստոնյա քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին՝ իրենց մասնակցության համար, որը համարեց եղբայրության ճշմարիտ նշան):

Այսօր ես կուզամ ձեզի նոր Հայաստանեն, նորոգյալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն: Առաջին իմ այս այցելությանս առիթով, կաղոթեմ առ Աստված, որ իմ երջանկահիշատակ մախորդին՝ Վազգեն Ա ամենա-սիրելի Կաթողիկոսին հոգին երկնքի մեջ երջանկանա: Գիտեմ, որ անկա երեք անգամ այս գաղութը այցելած է, վերջինը ըլլալով 1984 թվականին: Ի՞նչ է տարբերությունը իմ սիրեցյալ և այժմ հանգուցյալ եղբոր և իմ այցելության: Ես որքան խոնարհորեն պետք է Աստուծո առջև ծունկի գամ, որ ինձի ըրալ մեծագույն պատիվը, որ որևէ մեկ եկեղեցականի կրնար եղած ըլլալ, առաջին Կաթողիկոսը եղա, որ ընտրվեցավ հայ ժողովուրդի կամքով իր սեփական ազատ ու անկախ հանրապետության մեջեն: Եվ այսօր կուզամ ձեզի բերելու համար ազատության ու անկախության շունչին անդրադարձումի և մեր պետության ու Հայաստանյայց Եկեղեցիին Հայաստանի մեջ ամրացման, զորացման ավետիսը և անոր հանդեպ մեր պարտականության կատարման հանձնառությունը:

Երբ եկավ իմ երջանկահիշատակ մախորդը այստեղ, զինքը ընդունողներուն մեջ չկար Հայոց Հանրապետության ներկայացուցիչը: Հանձինս մեր դեսպանին, ես կողջունեմ այդ պետությունը և կտեսնեմ, որ բոլորիս կյանքերը ջրդեղվեցան, նորոգվեցան այդ Մեծ Դեպքին՝ հայոց անկախության այս հռչակման պատմական, շրջադարձային, անկյունադարձային նշանակություն ունեցող դեպքին առջև: Հետևաբար, այսօր մենք կգտնվենք իրադարձության մը, դեպքի մը դիմաց, ուր ամեն մարդ պարտավոր է ճշտել իր պարտականության չափը և ձևը: Եթե ենք ու կմնանք այնպես և այն, ինչ որ էինք ասկե առաջ, կնշանակե, որ այս մեծ, հեղաշրջող դեպքը հայոց պատմության, մեր հայրերուն երազին իրականացումը մեծ նշանակություն չունի մեզ համար:

Գեղեցիկ խոսք մը կա, որ կարդացած եմ ես. Everyone is thinking of changing the world, no one is thinking of changing himself. Օտախորունկ խոսք է: Ամեն մարդ կմտածե աշխարհը փոխել, քայց ոչ ոք կմտածե ինքզինքը փոխել: Մենք պետք ունինք ներքին փոփոխության: Եթե ես պետք է լինեմ այն անձը, ինչ որ էի այս դեպքեն առաջ, դարաբաղյան շարժումեն և անոր հետևող Հայաստանի անկախության հռչակումեն ետքը, եթե մույն անձը պետք է մնամ, ի՞նչ կնշանակե այդ դեպքը ինձի համար:

Սիրելի եղբայրներ և քույրեր,

Առանց փոփոխության պատմություն չկա: Պատմությունը կրկնողա-

կան, կադապարային, անշարժ գոյություն մը չէ: Պատմությունը ըսվածը, կյանք ըսվածը հարափոփոխ ընթացք մըն է դեպքերու, երբեմն աննախատեսելի դեպքերու, և այս փոփոխությանը ընթացքին մեջ մարդոց և ազգերու և եկեղեցիներու իմաստությունը կկայանա փոփոխությանը մեջ բարեփոխություն ստեղծել: Ոչ թե սոսկ փոփոխություն դեպի լավը, այլ լավեն լավագույնը, մեր իղձերուն, մեր ապրումներուն, մեր հավատքին, մեր գաղափարներուն կատարման հառաջընթացը, զարգացումը, հառաջդիմությունը: Ահա եկած են որպես այդ բարեփոխության փոքրիկ առաքյալը:

Մեկ տարի և չորս ամիսներ անցան այն օրեն, երբ ես դարձա հայաստանաբնակ, Հայաստանի քաղաքացի և դարձա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաջին սպասավորը: Ահավասիկ մեկ տարի և չորս ամիսներ որ սահեցան, առիթը ունեցա ամբողջ Հայաստանի ժողովուրդը հայրապետական այցելություններով ճանչնալու: Առաջին հերթին գացի Լենինական, տեսա երկրաշարժի աղետեն հարվածյալ մեր ժողովուրդը: Ընտրվելու մեկ ամիս ետքը, մայիսին, գացի Արցախ՝ Ստեփանակերտ, Շուշի, Հաղորթ, Մարտակերտ, քոլոր շրջանները, տեսա այդ ժողովուրդին անքակտելի կապվածությունը այդ հողին: Այդ ժողովուրդին համար, երկու հեղուկներ միացած են իրարու. արյուն և քրտինք: Քրտինք և արյուն կխառնեն իրենց հողին, այդ հողեն չեն բաժնվիր և հոն է իրենց ուժի աղբյուրը:

Գացի և շրջագայեցա հյուսիսն ու հարավը, արևելյան ու արևմտյան քոլոր կողմերը մեր Հայաստանին: Իմ խորին ըմբռնումով, իմ պարզ հասկացողությամբ, հոսին, ժողովուրդին պատասխանատու որևէ մեկը եթե այդ ժողովուրդին չհաղորդվի, այդ ժողովուրդին զգացումները, ապրումները, գաղափարները, սպասումները, տազնապները, իրագործումները իր սեփական երակներուն մեջ չգգա, ի՞նչ տեսակ հովիվ կրնա ըլլալ: Ինձի համար տիպարը Հիսուսն է: Քրիստոս ո՛չ մեկ նամակ գրեց, ո՛չ մեկ շրջաբերական գրեց, ո՛չ գրասենյակ ունեցավ, այլ շրջեց ժողովուրդին մեջ, ժողովուրդին հետ և ժողովուրդին համար: Ահա և քրիստոնեական պատմության ճշմարիտ իմաստը:

Եվ ահավասիկ ընտրությունես ետք, Հայաստանի մեջ կատարած հովվապետական այցելություններես ետք, Մոսկվայի և Վրաստանի և նաև Ռուսաստանի հայության տված այցելություններեն ետքը, տեսա և Ռուսաստան, գացի Հյուսիսային Ամերիկա և եթե երբեք եկած չըլլայի այս Լատին, Հարավային Ամերիկա, քոլորդ ալ պիտի ասեիր՝ «Այս մեր մոր կաթողիկոսն ինչ է, մեզ մոռցավ...»: Ո՛չ, ահավասիկ եկած են, ինձի համար ոչ հյուսիսը կարևոր է, ոչ ալ հարավը, այլ ժողովուրդն է կարևոր: Այսօր եկած են այս բազմության մեջ ըլլալու: Պրագիլիա եղա, Ուրուկվայ եղա և ահավասիկ եկած են Արժենթինա, ուր կցտնվի Հարավային Ամերիկայի մեջ ապրող մեր ժողովուրդին մեծամասնությունը: Եվ ի՞նչ քաղցր պահ էր ինձի համար անցնող ամիս ընդունիլ այցելությունը մեր երիտասարդ սերունդին այստեղեն ի Սուրբ Էջմիածին:

Ձեր վարժարաններեն շրջանավարտ սաներ, երիտասարդներ եկան.

ես անոց միջին մասի համար առի՞ճեր բոլորի հավատքի կենդանության
և ազգային առողջ ըմբռնումներուն: Իկած եմ հաղորդվելու ձեզի: Ոչ թե
խոսելու միայն, ոչ թե պատգամելու, այլ խոսակցելու, լսելու: Մեկ
խոսքով՝ հաղորդվելու ձեզ հետ, ձեզմով գործանալու, որովհետև ես
կզգամ, որ վերանորոգության հրամայականը կա մեր առջև, թե՛
եկեղեցականորեն, թե՛ ազգայնորեն և թե՛ տնտեսականորեն:

Վերանորոգություն, վերակենդանացում, վերականգնում, - այս պետք
է ըլլա մեր նշանաբանը: Դեռ ստիժներ պետք է ունենամ խոսելու ձեզ
հետ: Մեկ շաբաթ հոս եմ, ուզեք. թե չուզեք: Այդ մեկ շաբաթվան ընթաց-
քին պիտի այցելեմ ձեր դպրոցները, պիտի ըլլամ մեր ժողովուրդի
զանազան խավերուն հետ, մեծին ու փոքրին հետ, բայց այստեղ մեկ բան
կուզեմ ասել. որ մեր այսօրվան կարգախոսը, նշանաբանը՝ վերանորո-
գումը, կենդանակե յոթանասուն տարիներու սովետական բռնապետա-
կան, հակակրոնական սիստեմին թողած հետքերը ջնջելու, մեր
հարազատ բնության մեջ վերանորոգվելու, վերահայանալու մեր
հայրերու դավանությամբ, այն ըմբռնումներով, որոնք մեզ պահած են և
անոնք են, որոնք խախտված են այս յոթանասուն տարիներու ընթացքին:

Եվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, իր հոգևոր ճեմարանով, իր
կրոնական դաստիարակության համար ստեղծած գործունեությամբ, իր
նոր հրատարակչություններով, դեպի ժողովուրդ երթալու իր նոր
առաքելությամբ կոչված է քանդվածը վերաշինելու և շինվածը գեղեց-
կացնելու: Այս է մեր գործը և կուզեմ, որ այս մասին ուրիշ առիթով
խոսինք, որովհետև, սիրելի եղբայրներ և քույրեր, պարզապես այս
առաջին վայրկյանն անդրադառնալով նշանաբանին, երևակայեցեք
ձեր մտքով, պատկերացուցեք ի՞նչ պետք է ըլլար Պունտու Այրեսը, եթե
բոլոր եկեղեցիները զոցված ըլլային յոթանասուն տարի, ի՞նչ պետք է
ըլլար Պունտու Այրեսը, եթե բոլոր եկեղեցականները արտոնված ըլլային,
սեմինար չըլլար, հոգևոր դպրոց չըլլար, յոթանասուն տարի Ավետարան
չքարոզվեր, դպրոցներուն մեջ կրոնական դաստիարակություն չտրվեր,
ի՞նչ պիտի ըլլար արդյոք, ի՞նչ պիտի ըլլար Պունտու Այրեսը: Բայց
դարձյալ ծունկի կուզամ Աստուծո և կըսեմ՝ «Փառք քեզ, Տեր, որ բոլոր
տեսակի հակակրոնական, քանդիչ այդ փորձերուն դիմաց կենդանի
մնաց հավատքը ողջ ժողովուրդի հոգիի մեջ»:

Երբ մեր վրա իշխող բռնապետական իշխանությունը լուեցուց
մարդիկը, քարերը խոսեցան: Ով որ կոպչեք այդ քարերուն, հավատք
կըմպեք այդ քարերեն: Սինեմայի վերածեցին եկեղեցիները, էլի
հավատքը չդադրեցա՞վ: Դույնիսկ հարդանոցի վերածվեցան: Ես ՅՅ, ՅՅ
և ՅՅ թվականներուն երբ գացի Հայաստան, գացի եկեղեցի մը, տեսա, որ
հարդով լեցուն էր: Եկեղեցին հարդ լեցուցին, բայց տեսա այս աչքերովս,
որ հայ կանայք կուզային, մոմ կվառեին քարերուն վրա և հավատք
կծծեին այդ քարերեն: Լուեցուցին լեզուն, չկրցան մարել հավատքը:
Այսօր, սակայն, այդ հավատքը պետք ունի գիտակցություն դառնալու,
կյանքի երևույթ դառնալու: Աստոր համար է, որ կըսեմ, նորոգյալ Աթոռի
պետք ունինք:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ոչ թե հուշարձան մըն է, որ գաք և տեսնեք հիմ-հիմ դարուց հիշատակները, այլ տեսնեք մոր սերունդ մը հավատքի տարածիչ, ժողովուրդի կյանքի բարեփոխիչ: Մեկ խոսքով Էջմիածինը monument չէ, հուշարձան չէ, mission է, առաքելություն է, գործունեություն է իր ժողովուրդի կյանքի բարեփոխության համար: Եկած եմ ահավասիկ այս զգացումներով և կուզեմ, որ դուք ալ հաղորդակից դառնաք ինձի, որ ամբողջ հայ ժողովուրդը և՛ Հայրենիքի մեջ, և՛ Սփյուռքի: Եվ այլևս Հայրենիք-Սփյուռք հարաբերությունը այնպես սերտանա, այնպես թարմանա, որ անջատումը զուտ քաղաքակրթական, զուտ մշակութային, cultural, ինչպես կըսեն, տարբերություն ըլլա, հոգեկան տարբերություն չըլլա:

Հրամմեցեք, եկեք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, մանավանդ սեպտեմբեր 8-ին, եթե կրնաք, Մյուռոնօրհներդին, և տեսեք հավատքը ինչպես կվերակենդանանա մման այն պարտեզին, որուն մոր ջուր կուտաս և թառամած ծիւղերը վերստին կանաչություն կզգենուն և մոր պտղավորում կդառնա Հայոց փոքր ածուին մեջ: Թող Աստուծո ուժը, շնորհքը և մեր ազգին ինքնարժեքության գաղափարը ուժեղանա ձեր մեջ հավիտյանս հավիտենից: Ամեն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Եկեղեցում տեղի ունեցած արարողությանը անմիջապես հաջորդեց Վեհափառ Հայրապետի այցելությունը Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից համանուն կրթական հաստատություն:

Նորին Սրբությունը նախ հանդիպեց «Գևորգ Չըննույան» երկրորդական վարժարանի սաների հետ, որի ընթացքում աշակերտները վանապան հարցեր ուղղեցին Վեհափառ Հայրապետին: Այս հանդիպում տեղի ունեցավ նաև «Հայ Կենտրոնի» մեծ և գեղեցկապարդ սրահում նախակրթարանի և մանկապարտեզի սաների հետ: «Հայ Կենտրոնի» անունից Վեհափառ Հայրապետին բարի գալուստ մաղթեց թեմական խորհրդի ատենապետ պրն. Էդուարդո Քարամյանը:

«Մեծ պատիվ է ինձի համար, իբրև Հայ Կեդրոնի ատենապետ, բոլոր ներկաներուն կողմն բարի գալուստ մաղթել մեր սիրելի Վեհափառ Հոր՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Հարավային Ամերիկայի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո թեմերում տված իր այս անդրանիկ այցելության առիթով:

Մեր այս առաջին հանդիպումը Վեհափառ Հոր հետ տեղի կունենա հայ ժողովրդի համար պատմական ժամանակաշրջանի մը մեջ: Հայաստանի Հանրապետության ստեղծումը, Արցախի հերոսական ու հաղթական պայքարը և մեր Եկեղեցվո 1700-ամյակը խոր ազդեցություն ունին մեր ընդհանուր գործունեության վրա. կպահանջեն անմիջական աշխատանք և կստիպեն, որ լրջությամբ անդրադառնանք ապագային:

Մենք՝ արժանաթիմահայ համայնքը, Յեղասպանության վերապրող սերունդի հաջորդներն ենք և կհավատանք, որ մեր մահատակներուն հիշատակը հարգելու լավագույն միջոցը այսօր մեկ կողմն է՝ Մայր Հայրենիքը զորացնելն է և մյուս կողմն՝ պահել ու պահպանել մեր ազգային հաստատությունները Սփյուռքի մեջ: Վեհափառ Հոր ներկայությամբ վստահաբար մեր այս զգացումները պիտի զորաման ու օրհնվին: Ուստի Աստուծո՛վ կինդրենք, որ մեզի կարողությունն տա, որպեսզի այս զգացումները կարենանք փոխանցել ման մոր ու ապագա սերունդներուն:

Վեհափառ Տեր, շնորհակալ ու նրախտապարտ ենք Զեր Հովվապետական այս այցելության համար: Վստահ ենք, որ այն իր խորունկ և անմոռանալի ազդեցությունը պիտի ձգե մեր համայնքին վրա:

Բարի գալուստ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին ու իրեն ընկերակցող հոգևորականներուն»:

Հանուն դպրոցի տնօրենության և աշակերտության քարիզալստյան խոսքով հանդես եկավ վարժարանի տնօրեն պրն. Պետրոս Հաջյանը: Այնուհետև ներկայացված գեղեցիկ հայտագրից հետո աշակերտությանը իր հայրական խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ պատգամելով նույն եռանդով և նախանձախնդրությամբ պահպանել մինչև այսօր ձեռք բերած հաջողությունները:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Երեկոյան ժամը 18.30-ին «Ալվեսո Պալաս» հյուրանոցի իր հարկաբաժնում Վեհափառ Հայրապետն ընդունեց Հայ Ավետարանականների միության ներկայացուցիչներին:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը հայտնեց այն տեսակետը, որ այսօր Հայաստանում քրիստոնեությունը տարածելու համար կարիք չկա առանձին-առանձին և ինքնուրույնաբար քարոզել Ավետարանը, այլ պոքացնել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և այս ճանապարհով հայ հավատացյալներին հասու դարձնել Տիրոջ խոսքին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Հայ Ավետարանականների հետ հանդիպումից հետո, երեկոյան ժամը 19.00-ից մինչև ժամը 20.30-ը, Վեհափառ Հայրապետը մասյո ասուլիս տվեց Բուենոս Այրեսի երկու խոշոր՝ «Լա Նասիոն» և «Քլարին» թերթերի թղթակիցներին, Արգենտինա այցելության նպատակի, հայ կյանքում Հայ Եկեղեցու ունեցած դերի, աղոթքի և հոգևոր պանազան հարցերի մասին:

ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ «ՊՈՂՈՍ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Երեկոյան ժամը 21.15-ին «Caesar Park» հյուրանոցում բարիգալստյան ջերմ ընդունելություն էր կազմակերպվել Վեհափառ Հայրապետի վաղեմի բարեկամներ Արմեն և Սիրանուշ Մեծատուրյան-Արզումանյանների կողմից: Այս հյուրասիրությանը ներկա էին շուրջ 40 ազգայիններ:

Ընթրիքի սեղանի շուրջ հավաքվածներն առիթ ունեցան ավելի մոտից ճանաչելու և շփվելու Ամենայն Հայոց Հայրապետի հետ:

Վերջում ներկաներին խոսք ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ ոգեկոչելով իր բարեկամ Պողոս Արզումանյանի հիշատակը, կոչ ուղղեց հետևել նրա օրինակին, որը իր սեփական քրտինքով և աշխատանքով հանապազօրյա հացի դրամ վաստակելուց կարողացավ հասնել բարեկեցիկ կյանքի և իր բարեգործություններով օգտակար լինել նաև հասարակաց կյանքի պարգացմանը:

ՑՕԳՈՍՏՈՍԻ, ՀԻՆԳՇԱԲԹԻ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴ ԿԱՐԴԻՆԱԼ ԿՈՒԱՐԱԶԻՆՈՅԻ ՀԵՏ ԵՎ ԵԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Սոափոտյան ժամը 11.00-ին Հայոց Սոաջնորդարանում Վեհափառ Հայրապետը հանդիպեց Արգենտինայի Կաթոլիկ Եկեղեցու Սոաջնորդ, Բուենոս Այրեսի արքեպս. Կարդինալ Կուարաչինոյի հետ, հանդիպում, որին ներկա էին նաև քաղաքի բոլոր հարանվանությունների՝ Հույն, Արաբ, Ռուս Օրթոդոքս, Մնգլիկան, Լութերական, Ավետարանական Եկեղեցիների շուրջ 30 ներկայացուցիչներ, ինչպես նաև մահմեդականների հոգևոր առաջնորդը:

Սոաջնորդարանի սրահում հանդիպումից և զրույցից հետո, բոլոր մասնակիցները «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի՝ էկումենիկ աղոթքի:

Ողջույնի և աղոթքի բացման խոսքերով հանդես եկան Կարդինալ Մարիո Սերրան և Արգենտինահայոց Սոաջնորդ Գիսակ սրբապանը: Ապա Հայ Կաթոլիկների համայնքից Հայր Պողոս Հեքիմյանը ընթերցեց Պողոս առաքյալի թուղթը: Այնուհետև Սուրբ Ավետարանը հայերենով ընթերցեց Տաթև արքեպս. Ղարիբյանը, որը խապաներենով թարգմանաբար կարդաց Կարդինալին ընկերակցող հուան հոսե Իրիարթե եպիսկոպոսը:

Սուրբգրային ընթերցումներից հետո հաջորդաբար խապաներենով աղոթքներ կարդացին Տիեզերական Պատրիարքության ներկայացուցիչ Գենադիոս արքեպս. Խրիստոլաքիսը, Ռուս Եկեղեցու Սոաջնորդ Պատրիարք արքեպիսկոպոսը, Մնգլիկան Եկեղեցու առաջնորդ Դեյվիդ Լիկը, Միացյալ Լութերական Եկեղեցու հովիվ Դեյվիդ Քալվոն, Անտիոքի Ուղղափառ Եկեղեցու արքեպս. Կիրիլոս Դումատը: Ապա երգչախումբը

երգեց «Հայր Մեր» և «Քրիստոս ի մեջ մեր յայտնեցաւ» պատարագի հատվածները, որի ընթացքում բոլոր մասնակիցները, ինչպես նաև հավաքված հավատացյալների խումբներում բազմությունը միմյանց փոխանցեցին Տիրոջ հայտնության ավետիսի սուրբ համբույրը: Երգերից և ողջույնի արտահայտությունների փոխանցումից հետո երկուստեք խոսքեր փոխանակեցին Վեհափառ Հայրապետն ու Կարդինալ Կուարաչինոն, որում շեշտվեց համեղբայրության և քրիստոնեական սիրո գաղափարը, ինչպես նաև էկումենիկ այսպիսի աղոթքներին առավել թափ և գործնականություն հաղորդելու անհրաժեշտությունը:

Կարդինալ Կուարաչինոն բարի գալուստի ջերմ արտահայտություններով վեր հանեց հայ ժողովրդի դերը որպես առաջինը քրիստոնեությունը պետականորեն ընդունած ժողովրդի: Անդրադարձավ նաև Հայոց Ցեղասպանությանը՝ մեծարանքի իր խոսքը արտահայտելով հայության անսասան քրիստոնեական հավատքի հանդեպ, ողջունեց Հայաստանի Հանրապետության ստեղծումը և հայության բերած նպաստն Արգենտինային: Նաև փափագ հայտնեց, որ պատմական տարբեր հանգամանքների բերումով Եկեղեցիների բաժանումը հետզհետե ավելի ու ավելի կամրջվի միջեկեղեցական սերտ հաղորդակցության հաստատումով:

Իր սրտասխան խոսքում Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Արգենտինայի բարեխնամ երկրի կառավարությանն ու Եկեղեցուն՝ հայերին ընծայված բոլոր դյուրությունների համար, և հայտնեց, թե այս վայրկյանին կրոնական միասնության պահն են ապրում բոլոր այստեղ հավաքված Եկեղեցիների ներկայացուցիչները, քանի որ բոլորը միացած են առ Աստված աղոթքով և մարդկության ծառայության պատրաստակամությամբ: Այս Վեհափառ Հայրապետն անդրադարձավ էկումենիկ շարժմանը ավելի մեծ մասնակցություն բերելու անհրաժեշտությանը: Ոչ միայն հայկական, այլև համաքրիստոնեական առումով և տարողությամբ կարևորեց Հայ Եկեղեցու 1700-ամյակի տոնակատարությունը, ներկայացրեց այսօրվա անկախության պայմաններում ապրող և վանական հոգևոր ու տնտեսական խնդիրների դիմակայող, բայց քրիստոնեական վերապարթոնքի ոգով և հայրերի ավանդությունների վերականգնման փնտրտուքի ճանապարհին գտնվող հայ ժողովրդի կացությունը:

Փոխանակված ողջույնի խոսքերին հաջորդեցին Վեհափառ Հայրապետի և Կարդինալ Կուարաչինոյի ընթերցած աղոթքները:

Վերջում տարբեր Եկեղեցիների և կրոնների ներկայացուցիչները իրենց պատգամը բերեցին՝ հայցելով աշխարհին խաղաղություն և արդարություն: Այս հաջորդեց Հայոց Հայրապետի և Կարդինալ Կուարաչինոյի «Պահպանիչ» աղոթքը՝ հայերեն և իսպաներեն լեզուներով, որով և ավարտվեց այս եղբայրական էկումենիկ համախումբ պաշտամունքը:

Եկեղեցում կատարված արարողությունից հետո Ալգային Առաջնորդարանում տեղի ունեցավ հանդիպում, որի ընթացքում ներկաները առավել կարողացան մտերմանալ և ծանոթանալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ:

**ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՎ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԵՐԱՊԱՅԵԱՌ ԿԱՐԴԻՆԱԼ ԱՆՏՈՆԻՈ
ԿՈՒԱՐԱՉԻՆՈՅԻ ԽՈՍՔԸ**

**Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճար
8 Օգոստոս 1996**

Նորին Սրբություն,

Գարեգին ծառա Հիսուսի Քրիստոսի, ողորմությանըն Աստուծո և կամոքն ազգի եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մայրագույն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռո Արարատյան Առաքելական Մայր Եկեղեցվո Սրբո Էջմիածնի:

1. Որպես Բուենոս Այրեսի արքեպիսկոպոս և Արգենտինայի առաջնորդ Ձեզ բարի գալուստ եմ մաղթում այս քաղաքում և այս երկրում, ուր ապրում, աշխատում և բարգավաճում են հայկական արմատներ ունեցող այնքան ընտանիքներ և հաստատություններ, որոնց մեծ մասը կենդանի են պահում իրենց հինավուրց ավանդություններն ու քրիստոնեական ինքնությունը այս երկրում, որը բաց է մշակութային և կրոնական առողջ բազմազանության առջև:

2. Որպես եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ձերդ Սրբությունը ներկայացնում է ոչ միայն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որի արմատները սկզբնավորվում են Սուրբ Թադեոսի և Սուրբ Բարթողիմեոսի առաքելական քարոզչությունից և չորրորդ դարում Սուրբ Գրիգոր Լուսավորչից ստանում է իր կազմակերպական կառույցն ու նվիրապետությունը առաքելական ժառանգությամբ, դառնալով այսպիսով քրիստոնյա առաքին ազգը, և որ 301 թվականին Տրդատ թագավորի քրիստոնեության դարձով ազգն ու արքունիքը պատկանում են Քրիստոսի Հոգվմեական Կայսրությունից առաջ, այլ նաև հարազատ հայ ազգը, որը պատմական այլազան պարագաների բերումով կորցրել էր իր քաղաքական միասնությունը և սփռվել է մի լայն սփյուռքի մեջ ոչ միայն Սիրիայում, Պարսկաստանում, Հնդկաստանում, այլ նաև Եվրոպայում, երկու Ամերիկաներում և Ավստրալիայում:

3. Բացի իր անկախությունը վերահաստատած Հայաստանից, որը մաքառում է ապահով սահմանների համար, վիճակագրական տվյալները մեզ վկայում են, որ նույնքան կամ ավելի հայություն բնակվում է արդի Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, քան նրա սահմաններից ներս, որ լայն հողատարածություններ կան, որոնք պահանջվում են Հայաստանի կողմից և որոնք պատմականորեն Հայաստանին են պատկանում (ինչպես նույնիքն Արարատ սրբազան լեռը): Այս պատճառով, անտարակույս կարող ենք ասել, որ Հայ Ազգը ավելի լայն հասկացություն է, քան Պետությունը, և որ այն Ձերդ Սրբության մեջ գտնում է իր համաշխարհական ներկայացուցչական հանգամանքը, որպես ժառանգորդ, որ իր անձի մեջ միավորում է ծայրագույն եպիսկոպոսական նվիրապետության և համայն ազգի պատվանշանները:

4. Ձեզ ընդունել այս մայրավանքում, նշանակում է հարգանք մատուցել առ Քրիստոս, որի «Ծառան» եք, ինչպես նշում է Ձեր պաշտոնական անվանումը, և Ձեր անձի ընդմեջեն Հայ Ժողովրդի և Հայ Ազգի դարերի ընթացքում կրած տառապանքներին: Հավատքի և Հիսուս Քրիստոսի փարվելու պատճառով հալածանքներ հեթանոսների, օսմանցիների, խորհրդային նյութապաշտության, պետական շահերի կողմից, և այն բոլոր հանգամանքները, որոնք միացան հոգևարքի մեջ եղող մի կայսրության մեջ թուրքական իշխանությունների կողմից գործադրված հայոց ցեղասպանության սահմուկեցուցիչ ողջակեզի մեջ:

5. Հայաստանը, Հայ ազգը ունի տխուր առանձնաշնորհումը բացումը կատարած լինելու 20-րդ դարի ցեղասպանությունների շղթայի: Հայ ժողովրդի բնաջնջումը, որը նշանակում էր բնաջնջել նրա կրոնը, նրա այբուբենը, նրա ապրելակերպը, նրա նյութական և մարդկային հարստությունը, մեկ խոսքով, նրա հավատքն ու նրա մշակույթը: Եվ այս բոլորի հետ միասին, հարգանք ենք մատուցում ոչ միայն Ձեր ազգին, այլ նաև բոլորին՝ ժողովրդին և ազգին, իր կրոնի և մշակույթի համար հալածանքի և խտրականության ենթակա մարդուն, և մասնավորաբար Մերձավոր Արևելքի քրիստոնյա և ազգային փոքրամասնություններին, Սաուդյան Արաբիայում և Սուդանում հալածված քրիստոնյաներին, որպեսզի կրոնի ազատությունը հասարակության հիմնական ազատությունների սյուներ հանդիսանա:

6. Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին (Հայ Ազգային Եկեղեցին) և Հռոմեական Առաքելական Կաթոլիկ Եկեղեցին ունեն մույն հիմնադիրը՝ Հիսուս Քրիստոսը, մույն խորհուրդները՝ ներառյալ առաքելական ժառանգությամբ քահանայական ծառայությունը, մույն սերը Սուրբ Մայր Աստվածածնի հանդեպ, և Հիսուս Քրիստոսի վկաների անընդհատ մի շղթա՝ սրբերի և նահատակների մեջ: Սակայն դեռ չկա ամբողջական միություն, մեր Եկեղեցիների մարմինների լիարժեք միություն: Նրա պատճառը պատմական, ավելի հաճախ քաղաքական գործոններն են, որ մեր Եկեղեցիների կյանքի մեջ ունեցել են դժբախտ մեկնաբանություն: 451 թվականին հայ եպիսկոպոսները չկարողացան մասնակցել Քաղկեդոնի Տիեզերական Ժողովին, որովհետև այդ օրերին հայ բանակները, իրենց սպարապետ Սուրբ Վարդանի հրամանատարությամբ, պաշտպանում էին քրիստոնեությունը հեթանոս պարսիկների դեմ: Հետո հաջորդեցին թյուրիմացությունները, սխալ ըմբռնումները, սխալ հասկացողությունները, կղզիացումը, որին ենթարկվել է հայ ժողովուրդը իբրև հետևանք հեթանոս ժողովուրդների և ապա օսմանցիների հաջորդական ներխուժումների: Իրենց քաղաքների և թագավորությունների անկումը, կարճատև վերականգնումը վերստին ընկնելու համար գերության մեջ, խաչակրությունների շունչը, այսպես կոչված «Արևելյան Հարցի» հակամարտությունները, որոնց շրջանակներում Արևմուտքի գերպետությունները մոռացան Հայաստանը, ճնշումն ու ցեղասպանությունը, խորհրդային ամբողջատիրությունը և նորից հազարամյակների պայքարով նվաճված ազատությունը և իր արդի



Կարդինալ Կուրաչինոյի հետ Էկումենիկ հանդիպման ընթացքում

անկախությունը Հայաստանի Հանրապետությունում: Հավատում ենք, որ ապրում ենք բացառիկ մի ժամանակաշրջան, զորացնելու մեր ճիգերը ամբողջական միության համար:

7. Ամբողջ հայոց պատմության ընթացքում եղել են ամբողջական միության շրջաններ, ինչպես Կիլիկիայի միջնադարյան թագավորությունների և նրա հայրեր Գրիգոր Նարեկացիի և Ներսես Շնորհալիի որոշ ժամանակաշրջանների ընթացքում: Ներկայումս ի գործու է գիտուն վանական, Աստուծո ծառա երանելի Մխիթարի հիմնած կրոնական միաբանության մշակութային, փոխօգնության և ավետարանական գործունեությունը, և վեներելի ու վիճեմանի վանքերը, հայ մշակույթի փարոսներ, որոնք միության մեջ են Պետրոսի Աթոռի հետ: Մեր հայրենիքում նաև գործում է Հայ Կաթոլիկ եկեղեցին, որը Ջմմառում հաստատված իր եպիսկոպոսական կենտրոնի միջոցով պահպանում է հայկական ավանդություններն ու միությունը Պետրոսի ժառանգորդի հետ:

8. Բարի եք եկել այս քաղաք, որը գտնվում է նաև Սուրբ Հուդա Թադևոսի հովանավորության ներքո, որի հին և պաշտելի պատկերը պաշտվում է Մերսեդի քաղիլիկայում, Բուենոս Այրեսի Մայր եկեղեցուց մի քանի քալ անդին: Այնպես, ինչպես դիմավորել ենք Սուրբ Գրիգորի Աթոռի Ձեր նախորդին՝ Վազգեն Առաքինին, որ մեզ այցելեց երկու առիթով, մեր եկեղեցին և մեր ժողովուրդը Ձեզ ասում է Բարի Գալուստ: Շնորհակալություն միության և խաղաղության ի խնդիր Ձեր ներդրման համար, շնորհակալություն այնքան մեծ թվով հայերի ճիգի համար, որոնք Պլատայի այս օրհնյալ հողի վրա գտել են կրոնական ազատությունը, աշխատանքն ու հարգանքը, որը նրանք չեն վայելել իրենց սեփական հողի վրա: Թող Ամենաաբքունի Կույս Մարիամը՝ Մայր Աստվածածինը Տեր Հիսուս Քրիստոսի, որին պաշտում ենք որպես մեր հայրենիքի թագադրյալ թագունի, որպես Հուխանի մեր Մայր Աստվածածին՝ Ձեզ աջակից լինի և օրհնի Ձեր հովվապետական խնամքն ամբողջ հայ ժողովրդի ու ազգի հանդեպ»:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԲԸՄ ԵՎ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՐ ՍՐԱՀՈՒՄ

Էկումենիկ աղոթքից հետո վեհափառ Հայրապետը ժամը 13.30-ին այցելեց ՀԲԸՄ, որտեղ հանդիպեց վարչության անդամների և վարժարանի աշակերտության հետ: Հանդիսությունների դաշիժում հավաքվել էր վարժարանի «Պերճուհի Էմիլյան» նախակրթարանի, «Մարի Մանուկյան» հաստատության և «Սրբուհի Էքեշյան» մանկապարտեզի աշակերտությունը՝ թվով շուրջ 200 հոգի:

Բացման և ողջույնի խոսքով հանդես եկավ ՀԲԸՄ ատենապետ Ստեփան Կափլանյանը, որին հաջորդեց վարժարանի երկրորդականի և նախակրթարանի աշակերտների ներկայացրած հայտագիրը:

Վերջում աշակերտությանն ու հավաքվածներին իր հայրական

պատգամը տվեց Վեհափառ Հայրապետը՝ նախ ընդհանուր գծերով ներկայացնելով ՀԲԸՄ-ի ծավալած աշխատանքները ոչ միայն Բուենոս Այրեսում, այլև ամբողջ աշխարհում, ապա դառնալով աշակերտությանը հորդորեց միշտ այսպես եռանդով և աշխուժով մասնակցել քրիստոնեական և հայկական կյանքի վարձագմանն ու քարգավաճման գործին:

Հանդիսությունից հետո ՀԲԸՄ-ի «Սահակյան» սրահում տեղի ունեցավ ճաշկերույթ, շուրջ 250 հոգու մասնակցությամբ:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՕՄ-Ի «ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՈՒՆ»

ՀԲԸՄ կատարած այցելությունից հետո, ժամը 16.30-ին, Վեհափառ Հայրապետն այցելեց ՀՕՄ-ի խնամակալության ներքո գտնվող հայ երեց սերնդի «Հանգստյան Տուն», որտեղ բնակվում են եղեռնից շուրջ 25 վերապրողներ:

«Հանգստյան Տան» սրահում հավաքված հոծ բազմության ներկայությամբ Նորին Սրբությանը քարիզալստյան և ողջույնի խոսք ուղղեց ՀՕՄ-ի ատենապետուհի Մարի Սարաջյանը՝ ասելով.

«Սրտի անհուն հրճվանքով և խոր հպարտությամբ կրնդունինք Ձերդ Վեհափառության օրհնաքեր այցելությունը: Այն օրեն, որ Սրբո Հջմիածնի զանգերը ղողանջեցին՝ ավետելով համայն հայոց ազգին ընտրությունը Սուրբ Գրիգոր Լուսավորչի գահին վրա երջանկահիշատակ Վազգեն Ա-ի արժանագույն հաջորդին, անհամբեր սպասեցինք այս օրվան: Եվ ահավասիկ, որ մեր մեջ կգտնվիք, Վեհափառ Տեր, որպես մարմնացում մեր քրիստոնեական հավատքին ու երաշխիք մեր ազգային գոյության:

Գիտեմք, որ եկեղեցվո ու ազգի ծառայության Ձեր երկար տարիներուն մոտեն հետևած եք Հայ Օգնության Միության գործունեության: Ձերդ Վեհափառության համար ավելի քան ծանոթ են 1910-են ի վեր Միությանն ծավալած ազգակերտ աշխատանքները քարեսիրական նախաձեռնություններեն մինչև հայապահպանման ծրագրերը Սփյուռքի տարածքին և 1988- են ի վեր՝ նաև Մայր Հայրենիքի: Ոչ միայն ծանոթ եք ՀՕՄ-ի գործունեության, այլև միշտ գտնված եք անոր կողքին և Ձեր պայծառատես խրատներով, հոգեպարար խոսքերով քաջալեր հանդիսացած եք Միության:

Վեհափառ Տեր, արդեն առիթը ունեցաք այցելելու Սան Փավլո, Մոնթեվիդեո և Գորտոպա և վստահ ենք, որ այդ գաղութներուն մեջ Ձեր ուշադրության արժանացավ մեր մասնաճյուղերու կենդանի ներկայությունը, որպես գործոն դերակատար մյուս կազմակերպությանց կողքին հայապահպանման աշխատանքներուն: Այսօր Ձերդ Վեհության կրնդունինք Երջանային Վարչությանն նստավայր Բուենոս Այրեսի և հատկապես՝ ՀՕՄ-ի Օհաննես Տիարբեքիրյանի անվան Հանգստյան տան մեջ:

Անշուշտ առաջին հերթին մեր գլխավոր նպատակն է Ձերդ

Վեհոության օրհնության արժանացնել Հանգստյան Տան մեջ ապաստան գտած մեր մամիկներն ու պապիկները, որոնց համար հոգեկան անհուն բավարարություն է Ձերդ Վեհության ներկայությունը: Կյանքի ու հույսի աղբյուր է Ձեր աղոթքը և հավատքի կենարար աղբյուր՝ օրհնությունը: Իր հիմնադրութենեն ի վեր, նախ Օսմիկ Պոստորյան և ապա Օհաննես Տիարբեքիդյան ՀՕՄ-ի Հանգստյան Տունը մեկ և միակ նպատակ մը ունեցած է՝ մեզի կյանք տվող մամիկներուն ու պապիկներուն ապահովել ջերմությունը հայկական օջախին: Հոս, Վեհափառ Տեր, ՀՕՄ-ի ընկերուհիներս կփորձենք մեր լավագույնը ընելու՝ անոնց ցուցաբերելու համար լավագույն գուրգուրանքը, լավագույն հանգիստը:

ՀՕՄ-ին գործերը բնականաբար ավելի ընդարձակ ոլորտ մը կընդգրկե: Բարեսիրական նախաձեռնությունները, ըլլա համայնքի կարիքներուն և ըլլա ընդհանրապես մարդասիրական կազմակերպություններու, առօրյա մտահոգությունն են մեր մասնաճյուղերուն, որոնք առավել կնախաձեռնեն հրապարակային դաստիարակիչ հանդիպումներու, տարբեր դասընթացներու կազմակերպման: Առանձին գուրգուրանքի արժանի է կրթական մարզը. ոչ միայն սաներ կպահենք մեր վարժարաններուն մեջ, այլև կնախաձեռնենք հայեցի դաստիարակության բարելավման նպատակադրված տարբեր միջոցառումներ, նաև մշակույթը՝ որպես հայապահպանման կենսական ազդակ: ՀՕՄ-ի հովանավորության տակ կգործեն «Նաիրի» պարախումբը՝ հայրենի պարուսույց-վարպետ Վանուշ Խանամիրյանի ղեկավարությամբ, ինչպես նաև «Աշխեն» մասնաճյուղի «Մարալիկ» մանկապատանեկան երգչախումբը:

Վերջապես, ի յուր 1988-են ի վեր համայն հայությունը ոտքի հանած Հայրենիքի իրադարձությանց, մենք, Հարավային Ամերիկայի հեռավոր այս ափերեն, չէինք կրնար մասնակից չըլլալ մեր ժողովուրդի երթին՝ Արցախի ազգային-ազատագրական պայքարեն մինչև ազատ ու անկախ պետականության վերականգնում: Որպես Հարավային Ամերիկայի միավոր, մենք մասնակից ենք Կեդրոնական Վարչության մակարդակ վ առնված բոլոր նախաձեռնությանց, հատկապես՝ որբերու խնամակալության ծրագրին, սակայն նաև 1992-են ի վեր ստեղծած ենք Հայաստանի Բժշկական Օգնության Հանձնախումբը, ՀՕՄ-ՔԱՄՓՐԱ անունով ծանոթ, որ բժիշկ Անդրանիկ Էորմեքյանի ղեկավարությամբ ցարդ բազմաթիվ բժշկական-մարդասիրական առաքելություններ կատարած է Հայաստան և Լեռնային Ղարաբաղ:

Ներկայացնելով շատ ամփոփ կերպով ՀՕՄ-ին Հարավային Ամերիկայի միավորիս տարած գործերը, Վեհափառ Տեր, մենք անգամ մը ևս կհաստատենք մեր վճռակամությունը՝ հաստատ մնալու մեր հանձնառության վրա և աշխատելու վասն գաղութին ու հայ ազգին: Կխնդրենք միայն Ձերդ Վեհության օրհնությունն ու աղոթքը, որպեսզի Էջմիածնի Աստվածային գործությունը ընկերանա մեզի»:

Ստենապետուհու նման ջերմ և սրտաբուխ խոսքով հանդես եկավ նաև նախկին ատենապետուհի Աշխեն Սերհակոբյանը.

«Գաղութը եռուզեռի մեջ էր՝ անհամբեր սպասելով Ամենայն Հայոց կաթողիկոսի գալուտյան և Աջահամբույրին՝ պատրաստ ընդունելու պատշաճ կերպով և լսելու օրհնաբեր, հուսալից և մխիթարական պատգամները: Հիրավի Ձեր գալուտսը մեզ գոտեպնդեց: Ավելի եռանդ ու կորով պիտի ունենանք՝ միասնաբար աշխատանք տանելու ի սեր Հայրենիքին ու գաղութին օգտին ու հառաջդիմության:

1928-ին բազմանդամ ընտանիքիս հետ ոտք դրինք այս ասպնջական, սակայն օտար ափերը, ուր տակավին գոյություն չուներ ո՛չ ակեղեցի, ո՛չ դարոց և ո՛չ ալ մամուլ: Մեզ նման գաղթական ծերունի Տեր Հայրը խաբխուլ տան մը մեջ հանձն առած էր ժամերգություն ընելու կիրակիները: Գաղութին թիվը ամենշան էր այդ տարիներուն: 1931-ին կիրակիները: Գաղութին թիվը ամենշան էր այդ տարիներուն: 1931-ին լույս կտեսներ առաջին հայատառ թերթը, «Արմենիա» վերտառությամբ՝ մեծ ուրախություն պատճառելով բոլորին, իսկ 1933-ին լույս տեսավ հայտաբարություն մը՝ ուղղված գաղութին տիկնաց և օրհորդաց՝ հրավիրելով անոնց ժողովի մը: Այդ կոչին ընդառաջեցին 35 անձեր: Գրագետ պարոն Ռեն վարդանյանը, որ խմբագիրն էր թերթին, բացատրեց հավաքության նպատակը, որն էր՝ հիմնել Հ.Կ. Խաչը, գաղութիս մեջ ներկայիս ՀՕՄ-ի մասնաճյուղ մը, որի կենտրոնը կգտնվեր Հյուսիսային Ամերիկա: Միտով և ոգեռիությամբ ընդունվեցավ առաջարկը՝ ծանոթ ըլլալով անոր վեհ ու օգտաշատ գործունեությանը: Արձանագրվելով զրեթե բոլորս, ընտրեցինք առաջին առժամյա վարչականները: Քիչ ժամանակվա ընթացքին գաղութը բազմացավ ու անդամներու թիվը բարձրացավ զգալի կերպով: Մեր առժամյա պարտականությունն էր՝ օգնել նորիներուն, հայթայթել բնակարան ու աշխատանք, օգնել չքավորներուն, տեղավորել հիվանդները և այլն: Մինչ այդ ստեղծվեցան դպրոցները, Ս.Գրիգոր Լուսավորիչ տաճարը՝ Նիքոթեյան ընտանիքի բարերարությամբ: Ռոշենցիք մահ օգնել չքավոր աշակերտներուն՝ հատկացնելով կրթաթոշակներ, կազմակերպել դասախոսություններ ու սեմինարներ, ունեցանք մասնաճյուղեր հայաշատ թաղերու մեջ, ինչպես Պրագի, Մոնտեվիտեո և Գորտոպա: Ներկայիս ունինք բազմանդամ ընտանիք մը մեղվաջան գործունեությամբ: Այն ժամանակվա ՀՕՄ-ի գործունեության կարևոր մասնիկը եղավ մահ Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքին ստեղծել գործատեղի՝ պատրաստելով հանդերձներ, ուտեստեղեն ու դեղորայք, ուղղարկելով հսկայական հակերով սիրելի Հայրենիքի մեր քույրերուն:

Այս երդիկին տակ ապրող տարեցները, որոնք կանգնին իրենց կյանքի ամենադժվար հանգրվանը, անոնք և մենք երախտապարտ ենք բոլորիդ այս օր: Ձերդ վսեմության ներկայությունը բոլորիս համար անմոռանալի երջանիկ և ամենանշանակալից օրն է՝ Ձեր Հայրական օրհնություններով: Մեզ կմնա մեր առօրյա աղոթքներուն մեջ հայցել Ամենակարողեն, որ պարգևե Ձեզ արեւատություն, առողջություն և երկար կյանք՝ հովվելու աշխարհացրիվ մեր ազգը, ի մասնավորի մեր երիտասարդները՝ մեկտեղելով դեպի Հայրենիք, ուր պիտի ունենան ավելի փայլուն ապագա: Կմաղթենք սրտագին հաջողություններ Ձեր

մտադրած գործունեություններու, մեր թանկագին ու սիրելի Ամենայն Հայոց Կաթողիկոս: Տարեք մեր անկեղծ սրտի մաղթանքներն ու զգացումները, ինչպես նաև մեր ջերմ ու անկեղծ համբույրները Ազատ ու անկախ Հայրենիքի մեր բոլոր հայրենակիցներուն:

Մեծ ցանկությամբ կրկին տեսությունն աշահամբույրող՝:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը շատ պարզ և անմիջական խոսքով հայ տարեց սերնդի ներկայացուցիչներին պատմեց որ Հայաստանն այսօր հասել է այն ապատությանն ու անկախությանը, որին դարերով ձգտել և փափագել էինք հասնել և այսօր այն իրականությունն է: Նորին Սրբությունը խոսեց նաև այս նոր իրավիճակում Հայ Եկեղեցու ապատ և անսարգել գործունեության և վերանորոգության մասին:

Վերջում միասնաբար երգված «Տերունական աղոթք»-ով ավարտվեց այս հուշիչ հանդիպումը:

ԸՆԹՐԻՔ ՏԻԿԻՆ ԱԴՐԻՆԵ ՎԱՐԴՊԱՐՈՆՅԱՆԻ ՏԱՆԸ

Երեկոյան Վեհափառ Հայրապետը հյուրընկալվեց գաղութի նշանավոր բարերարներից Էդուարդո Սեֆերյանի և Վարդպարտյանների տանը: Նորին Սրբությունը կարևորեց այն իրողությունը, որ սույն ընտանիքը, պատված լինելով տնտեսական մեծ ձեռնարկումներով, անմասն չի մնում անշահախնդիր կերպով իր օժանդակությունը բերելու ազգային-եկեղեցական բոլոր նշանակալից ծրագրերի իրականացմանը:

Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ այսուհետև ևս այս ընտանիքը աննվազ եռանդով շարունակի իր ազգաշեն գործունեությունը, որովհետև Հայրենիքն ու Մայր Եկեղեցին պորավոր են իրենց պավակների անխոնջ նվիրումով և պոհաբերություններով:

ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿՈՐԴՈՎԱՅՈՒՄ

09 ՕԳՈՍՏՈՍԻ, ՈՒՐԲԱԹ

ԺԱՄԱՆՈՒՄ ԿՈՐԴՈՎԱ

Ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10.00-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Գիսակ և Տաթև սրբապանների, Բագրատ արեղայի, ՀՀ դեսպան պրն. Վահան Տեր-Ղևոնդյանի, դեսպանության երկրորդ քարտուղար պրն. Ռուբեն Մոսյանի և Վարչության ատենապետ պրն. Էդուարդո Քարամյանի, ժամանեց Բուենոս Այրեսից հյուսիս-արևմուտք գտնվող Կորդովա նահանգ, որտեղ շուրջ 4000-ի հասնող հայություն է բնակվում:

Օղանավակայանի ընդունելությունների հատուկ սրահում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Սուրբ Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Ավետիս քին. Թորոսյանը, Կորդովայի գաղութային միության ատենապետ պրն. Էդուարդո Կետիկյանը, ՀԲԸՄ վարչության ատենապետ պրն. Հարություն Բիլիկյանը, ՀՅԴ «Սնդրանիկ» ակումբի ատենապետ պրն. Տիտո Չաքյանը, Տիկնանց Միության ատենապետուհի տիկ. Ալիսա

Կոստանյանը, Սուրբ Գևորգ եկեղեցու երիտասարդ հոգաբարձուներ և դպրաց դասի անդամներ Կառլոս Մնանյանն ու Ռիկարդո Կոստանյանը, «Հայաստան» հիմնադրամի ներկայացուցիչ պրն. Խուան Կարլո Մերդինյանը, <ՄԸՄ-ի սկաուտական կապը, Սահակ-Մեսրոպ վարժարանի սաները, ուսուցչական կապը և տեսչուհի տիկ. Վարդուհի Կուսիկյանը: Ներկա էին նաև քույր Եկեղեցիների Կորդովայի առաջնորդներն ու հոգևոր հովիվները՝ Ասորի Եկեղեցու հոգևոր հովիվ Հայր Աֆրամ Թահան, Հույն Օրթոդոքս Եկեղեցու հոգևոր հովիվ հայր Նեկտարիոս Սելավմապիտիսը, Մարոնիտ Եկեղեցու հոգևոր հովիվ հայր Դանիել Բատրան, Հայ Ավետարանական Եկեղեցուց՝ պատվելի Խուլիո Գավուկյանը:

ԱՂՈԹՔ ԵՎ ՔԱՐՈՉ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ուղևորվեց դեպի Սուրբ Գևորգ եկեղեցի: Եկեղեցու մուտքի մոտ Նորին Սրբությանը շքերթով դիմավորեցին Հայ Դպրոցի աշակերտները, Վարժարանի նախակրթարանի և երկրորդականի աշակերտները, սկաուտական խմբերը և ժողովրդական բազմությունը: Եկեղեցու մուտքին ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի:

Գոհաբանական աղոթքից հետո Վեհափառ Հայրապետին, հանուն կորդովահայ համայնքի, բարիգալստյան և որդիական սիրո ողջույնի խոսք ուղղեց հոգևոր հովիվ Տ. Ավետիս քին. Թորոսյանը՝ ասելով.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ Սրբազան Հայրեր,

Հոգեշնորհ Հայր Սուրբ,

Մեծարգո պարոն դեսպան Հայաստանի Հանրապետության,

Սիրելի ժողովուրդ կորդովահայոց,

Հարգարժան ատենապետեր և վարչականներ մայրաքաղաքի և կորդովայի հայ գաղութի,

Նվիրական է այս պահը և այնքան սպասված, երբ հովվապետ ու բանավոր հոտ դեմ-դիմաց կկենան Աստուծո Տոան մեջ, ուր այնքան աղոթքներու և խնդրանքներու կարգին ամեն կիրակի և խորհրդակատարությանց առթիվ մեր հավաքական աղոթքը կբարձրանա առ Աստված՝ Ձերդ Սրբության արևշատության ու արդյունավետ գահակալության համար:

1995-ի ապրիլի 5-ին եկեղեցվույս հինավուրց կոչնակը ուրախաձայն հնչեց ու հանուր հայության ավետեց Ձեր ընտրությունը որպես '131-րդ Հայրապետ Լուսավորչի Քրիստոսահաստատ գահին: Այս բարեբաւտիկ առիթով ջանացինք ՅՅ անգամ հնչեցնել կոչնակը՝ ի նշան և հուրախություն ՅՅ տարիներու Ձեր պտղառատ կյանքին, որ համակ աշխատանք և մվիրում եղավ Հայ Եկեղեցվո ճամփով Աստուծո ու ազգին, ման ոգեղեն

անանցանելի արժեքներու՝ գիր ու գրականության, հոգևոր դաստիարակության և Հայ Եկեղեցվո ժառանգավորներ պատրաստելու աստվածահաճո գործին:



ՎԵՅԱԾԱՌ ՀԱՅՐԱՄԵՏԻ ԶԱՐԴԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ Ս. ԳԵՎՈՐԳ ՍՈՒՋԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ձեզի աշակերտած հարյուրավոր երախտապարտներեն մին ալ ես եմ, Վենհափառ Տեր, որ երկու տարի Ձեր հայրական շունչին տակ դաստիարակվեցա հոգևոր ծառայության համար: Եվ ահա 16 տարիներն ի վեր Աստուծո օգնությամբ կհովվեմ կորդովահայ հոտը, կհամարձակիմ անվերապահորեն հայտնել, թե Ձեր շունչեն, հոգևոր նախանձախնդրությունեն, գրասիրությունեն կայծեր ժառանգեցի և այսօր իմ կարգին շանադիր եմ զանոնք փոխանցելու կորդովահայ սերունդներուն:

Կորդովահայ մեր ժողովուրդը անքակտելիորեն կապված է իր եկեղեցուն, և անցնող 71 տարիներու ընթացքին ու նաև հառաջիկային Հայ Եկեղեցին պիտի շարունակե ըլլալ կեդրոնաձիգ ու նվիրական այն հաստատությունը, որ հայը կամրապնդե իր հավատքին, կեդրայրացնե իր նմանին և հոգեփոխությունը կշնորհե իր ներաշխարհին:

Կորդովահայը նախանձախնդիր է նաև իր հայրենի իրականության, կհուզվի, կտագնապի անոր մերօրյա իրականության հետ, գիտակից է նաև, թե սրտին հետ լայն բանալու է իր քսակը՝ ընդառաջելու համար օգնության կոչերուն: Այս գծով Ձեր հայրապետական հորդորներն ու կոնդակները անարձագանգ չեն մնացած կորդովահայության մոտ:

Վենհափառ Տեր, պարտ է, որ դուք խոսիք, և մենք մտիկ ընողներ ըլլանք ձեզի, ինչպես առաժը կրսէ՝ «խոսքը մեծին»:

Կհրավիրենք Ձեզ՝ Ձեր հայրական խոսքն ու օրհնությունը քաշխելու մեր քարեսեր ժողովուրդին»:

Ապա Առաքնորդ Գիսակ սրբապանը հրավիրեց Նորին Արքույանը՝ իր օրհնությունները բաշխելու Կորդովայի հայ ժողովրդին:

Հայոց Հայրապետը նախ գոհություն և փառք ընծայեց Տիրոջը այս անմահաաղեպ հանդիպման համար այսպիսի մի աշխույժ և միասնական համայնքի հետ, ապա իր գոհունակությունը հայտնեց Առաքնորդ սրբապանի և տեղի հոգևոր հովվի կատարած աշխատանքի համար և, խոսքն ուղղելով ժողովրդին, պատգամեց քայլել այն ճանապարհներով, որով անցել են մեր հայրերը. «Այսօր ժամն է գործի լծվելու և կյանքով ու աշխատանքով ամրացնելու մեր ձեռք բերած ապատությունը: Այդ ապատությունը միայն Հայաստանում բնակվող հայինք չէ, այլ ամբողջ հայությանը, որտեղ էլ որ նա բնակվելիս լինի: Հայրենիքի ապատության պայմաններում է, որ ապատ և համարձակ գործում է Մայր Եկեղեցին, որի անդամները մենք բոլորս ենք: Հետևաբար, շարժվենք և մեր իսկ սեփական ձեռքերով ու միջոցներով այս երկու վեհություններին՝ Եկեղեցու և Հայրենիքի կյանքին մեր կյանքը միախառնենք, որպես Աստուծո ցավակներ և հայի ժառանգներ»:

Եկեղեցում տեղի ունեցած արարողությունից հետո վեհափառ Հայրապետը կարճ այցելություն տվեց նաև տեղական դպրոցի մաս կապվող հայկական «Սահակ-Մեսրոպ» վարժարան:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿՈՐԴՈՎԱՅԻ ՆԱՀԱՆԳԱԳԵՏԱՐԱՆ



ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՐՈՒՄ

Կեսօրից հետո, ժամը 14.00-ին, վեհափառ Հայրապետը այցելեց Կորդովա նահանգը կառավարիչ դոկտ. Ռամոն Մեստրեին: Պաշտոնական ընդունելությունից և կարճատև պրուլցից հետո, պրն. Մեստրեն

իր առանձնատանը պաշտոնական ճաշկերույթ տվեց ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Ժաշկերույթին ներկա գտնվեցին ոչ միայն պետական, պաշտոնական ներկայացուցիչները, հայ համայնքի անդամները, այլև Կորդովայի քույր Եկեղեցիների հոգևոր առաջնորդները:

Ժաշկերույթի ընթացքում կառավարչի և Վեհափառ Հայրապետի փոխանակած երկուստեք ջերմ խոսքերից հետո, հանուն նահանգի Կարդինալ Պրիմադեսայի, բարիգալստյան խոսքով հանդես եկավ Ռոբերտո Էպիսկոպոս Ռոդրիգեսը, որը փոխանցեց Կարդինալի ողջույնները Վեհափառ Հայրապետին՝ ցանկանալով բարի կեցություն և արդյունավոր այցելություն Կորդովա նահանգ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ

Ժամը 16.30-ից մինչև 17.30-ը Վեհափառ Հայրապետը «Կորդովա» հյուրանոցի իր հարկաբաժնում ընդունեց Սուրբ Գևորգ Եկեղեցու կիրակնօրյա դպրոցի 12 ուսուցիչ-ուսուցչուհիների, որոնք նախ ներկայացրեցին իրենց Լատարած աշխատանքները, ապա զանազան հարցեր տվեցին Նորին Սրբությանը:

Վեհափառ Հայրապետը իր կյանքի փորձառությանը խոսեց կիրակնօրյաների դերի, ուսուցչության, դասավանդման և երեխաներին հասկանալի լեզվով Սուրբ Գրքի պատգամները փոխանցելու և Եկեղեցու արարողությունները բացատրելու մասին:



Ժամը 17.30-ից մինչև 18.30-ը Վեհափառ Հայրապետը մամլո ասուլիս ունեցավ պետական հեռուստատեսության և ռադիոյի, ինչպես նաև հայկական ռադիոյի և հեռուստատեսային ժամերի թղթակիցների հետ, որի ընթացքում տրվեցին զանազան հարցեր այսօրվա Հայաստանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կացության, Վեհափառ Հայրապետի Լատինական Ամերիկա և մասնավորապես Արգենտինա և Կորդովայի նահանգ այցելության մասին:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԲԸՄ-Ի ԿԵՆՏՐՈՆ

Ժամը 19.00-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Կորդովայի ՀԲԸՄ-ի կենտրոն, որտեղ միության անդամները, փարժարանի սաները և ուսուցիչները մեծ խանդավառությամբ դիմավորեցին Նորին Սրբությանը:

ՀԲԸՄ-ի սրահում Վեհափառ Հայրապետին ողջույնի և բարիգալստյան խոսք ուղղեց ՀԲԸՄ-ի ատենապետ պրն. Հարություն Բիլիկյանը՝ ներկայացնելով ՀԲԸՄ-ի անդամներին և ծանոթացնելով ծավալված աշխատանքներին:

Ապա ներկաներին իր Հայրական խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ նախ ոգեկոչելով ազգային մեծ բարերար Ալեք Մանուկյանի հիշատակը և պատգամեց ապրել մեծ բարերարի կյանքի օրինակով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՅԴ «ԱՆԴՐԱՆԻԿ» ԱԿՈՒՄԲ

Ժամը 20.00-ին Վեհափառ Հայրապետն այցելեց ՀՅԴ «Անդրանիկ» ակումբ, որտեղ ամփոփված է հայ հայրենասեր Արամ Երկանյանի աճյունը: Ակումբի մուտքին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին ՀՅԴ հանձնախմբի նախագահ Արտաշես Բյոշկերյանը, ակումբի անդամները և պատվո շարք կանգնած «Անդրանիկ» սկաուտական խումբը:

Ակումբի սրահում բարիգալստյան խոսքով հանդես եկավ պրն. Արտաշես Բյոշկերյանը.

«Վեհափառ Տեր, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս, Գերաշնորհ Տաթև Արքեպիսկոպոս Ղարիպյան, Գիսակ Եպիսկոպոս Մուրադյան, Բագրատ Աբեղա Գալստյան, ՀՀ դեսպան պրն. Վահան Տեր-Ղևոնդյան, Բուննոս Այրեսի Կեդրոնական վարչության Ատենապետ ճարտարապետ Գարամյան, Գորտոպահայ Գաղոսային վարչության Ատենապետ պրն. Էդուարդո Կետիկյան, կազմակերպություններու ներկայացուցիչներ, հարգելի ներկաներ,

Գորտոպայի Հ.Յ.Դ. կոմիտեի և իր գործակից կազմակերպություններու, Հ.Օ.Մ.-ի, Հ.Մ.Ը.Մ.-ի «Արմենիա» երիտասարդական Միության անունով կուգանք բարի գալուստ մաղթելու Ձեզ:

Վեհափառ Տեր, Ձեր գահակալության թվականեն ասդին, զոր կժամանիք այս հարավի երկիրները, գորտոպահայության և մեզի համար ուրախության և բավարարության անմոռանալի թվական մը պիտի ըլլա:

Հոփվական այս ձեր անդրամիկ այցելությունը անմոռանալի և բախտավոր օր մըն է ըսինք անոր համար, որ դարեր շարունակ իր թագավորությունը կորսնցուցած Հայ ժողովուրդը, ապա յոթանասուն տարի սովետական կարգերու իշխանությանց լուծեն հետո վերանկախացած մեր Հայրենիքը, Սուրբ Էջմիածինը կունենար իր անդրամիկ ընտրյալ Կաթողիկոսը:

Վեհափառ Տեր, հավատացած ենք, որ Ձեր այս այցը ներշնչումի աղբյուր պետք է հանդիսանա բոլորիս, ու պիտի մորոգե հավատքը հանդեպ նորանկախացած Հայրենիքի հզորացման և ամրապնդման:

Արտասահմանի մամուլեն կարդացինք Մայիս 28-ի առթիվ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարեն արտասանած Ձեր խոսքերը՝ ուղղված Հոգևոր Մեմարանի սաներուն, Մայր Աթոռի միաբանության և ներկա հավատացյալներուն, խոսքեր, որոնք ազգային արժեքներու և դեմքերու կվերաբերեն:

Սակայն տողերեն մեկը արտասահմանի հայության մասին է: Կրսեք. «Դա մեր արտասահմանի հայ ժողովրդի հայակերտման գործի ուժեղացումն է...», ապա՝ «ոչ թե միայն հայ մնալը, այլ հայորեն ապրելը...»:

Այո, Վեհափառ Տեր, հոս դժվար է հայորեն ապրելը, հերոսական ճիգ

կապահանջե: Խանդավառվեցանք ձեր այցելությանը, պիտի հրճվինք մոր այցելություններով: Ջամանք, որ այդ այցելությունները հաճախակի ըլլան, որպեսզի հաջողություն գտնե հայակերտման գործը:

Վստահ ենք, որ Ձեր այստեղ ներկայության կարճատև օրերուն պիտի լսենք Ձեր Հայրական Օրհնությունները թելադրանքները, խոսքերը:

Վեհափառ Տեր, վերջացնելով մեր խոսքը, ձեզի արևշատ ու արդյունաշատ օրեր կմաղթենք»:

Ապա Վեհափառ Հայրապետը խոսք ուղղեց ներկաներին՝ հորդորելով հարապատ մնալ Հայրենիքի և հավատքի համար մեր հերոսների թափած արյանը: Նրանք չխնայեցին իրենց կյանքը, մենք չխնայենք մեր ճիգ ու ջանքը Մայր Եկեղեցու և Հայրենիքի քարգավաճման ու քարգացման համար:

Հանդիպման վերջում Վեհափառ Հայրապետը Արամ Երկանյանի շիրմի առջև, շրջապատված սկաուտական խմբերով, հոգեհանգստյան աղոթք կատարեց Արամ Երկանյանի և հայ մյուս հերոսների հոգիների խաղաղության և փրկության համար:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԻՅ «ԲԱՔՐՁՅԱՆ» ՍՐԱՀՈՒՄ

Երեկոյան ժամը 20.30-ին Սուրբ Գևորգ Եկեղեցուն կից «Բաքրջյան» սրահում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կապմակերպվել էր մեծ հանդիսություն՝ մասնակցությամբ համայնքի վարժարանների, կիրակնօրյա դպրոցի, դպրաց դասի, միությունների և կապմակերպությունների երգի-պարի խմբերի, ինչպես նաև անհատ կատարողների: Կիրակնօրյա դպրոցի ուսուցչական կազմի և աշակերտության անունից բացման խոսքով հանդես եկավ Գրասիաս Բասմաջյանը:

«Վեհափառ Տեր,

Սիրելի հանդիսականներ,

Կորդովահայության համար բացառիկ օր մըն է այսօր: Հայոց Հայրապետի և Կորդովայի հայության հանդիպումի սիրագեղ պահը, ուր երկուստեք, Հովվապետ և հավատացյալներ մոտեն գիրար կճանչնան, թեն հոգեկան կապով՝ աղոթքով, արդեն իսկ կապված են իրարու:

Առավոտուն գաղութիս պատկան մարմինները, Ազգային վարժարանի աշակերտությունը, օղակայանի մեջ կարոտագին հուզումով դիմավորեցին Ձերդ Սրբությունը, մեր հոգիները ազգային արդար հպարտությունով լեցվեցան Ձեր ներշնչող ներկայությունով: Արմենիա փողոցին մեջ Ձեզ շրջապատած հայորդիներս, շքերթ կազմած և հոգեթով շարականներու երգեցողությունով, ուղղվեցանք Սուրբ Գևորգ Եկեղեցի, ուր կորդովահայ հաջորդական սերունդներ հայաբարբառ աղոթած են առ Աստված՝ խնդրելով արևշատություն Հայոց Հայրապետին համար:

Եկեղեցվո մեջ Ձերդ Սրբության արտասանած խոսքերն ու հորդորները ավելիով զորացուցին մեր հավատքը հանդեպ Աստուծո և բազմադարյան Հայ Եկեղեցվո: Բոլորս անխտիր պատասխանատու-

թյան գիտակցությամբ լեցվեցանք հանդեպ մեր հայրենի սրբություններում՝ հայ լեզվին, մշակութային արժեքներում, Սրբություն Սրբոց Ըջմիածնին, Հայրենիքին ու անոր քաջարի ժողովուրդին մղած գոյապայքարին: Վեհափառ Տեր, Դուք վերատեսուչն ու հսկիչն եք վերոհիշյալ սրբություններում և մեր հոգիներում մեք սեր ու հարգանք սերմանողը ամենց հանդեպ: Հետևաբար, այս համոզումներով տոգորված, գաղութիս մշակութային միություններն ու արվեստասերներս ծրագրեցինք գեղարվեստական ճոխ հայտագրով մը հանդես գալ ու զայն նվիրել Ձերդ Սրբության անդրաճիկ այցելության կորդովա՝ որպես մեր սրտերեն բխած բարիգալստյան ու կեցության ինքնաբուխ արտահայտություն:

Բարի եկաք, Վեհափառ Տեր, Ձեր գալուստը բարի ըլլա և կեցությունը՝ օրհնաբեր, և թող գեղարվեստը խոսի, ու մենք ըմբռնվենք ըլլանք արվեստի վայելքին»:

Շուրջ երկու ժամ տևած հանդիսությունից հետո ներկաներին իր հայրական պատգամները տվեց Վեհափառ Հայրապետը՝ գոհունակություն հայտնելով այն բանի համար, որ քրիստոնեական և ազգային ոգին սերտորեն միախառնված են, հիմնարար կերպով պահպանված և հաստատված այս փոքրիկ համայնքի մեք, և հորդորեց ավելի պորացնել այն:

10 ՕԳՈՍՏՈՍ, ԵԱԲԱԹ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ



ՎԵՋԱԲԱՐ ԶԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՈՐԲԵՐՏՈ ԵԴԻՍԿՈՊՈՍԸ ԸՐՋԱՊԱՏԱՎԱԾ
«ՃՈԿՈՒՄ» ԽՍԲԻ ԱՆՊԱՆԵՐԻ ԵՎ ՄՅՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԴԵՏ

Ստավուտյան ժամը 11.00-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Կորդովայի Կաթոլիկ Եկեղեցու Սոջաքնոդարան: Ի բացակայության

Ստաջնորդ Կարդինալ Պրիմադեսայի. Նորին Սրբությանն ընդունեց Ռոբերտո եպս. Ռոդրիգեսը: Հանդիպմանը ներկա էին էկումենիկ շարժման գրասենյակի պատասխանատու հայր Խոսե Ռիբոնը և «Ֆոկոլար» երիտասարդական խմբի անդամները:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը և Ռոդրիգես եպիսկոպոսը շեշտեցին այն գաղափարը, որ պետք է է՛լ ավելի ամրապնդել Եկեղեցիների միջև եղած հարաբերություններն ու կապերը:

ՄԱՏԱՂԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՂՋԵՐԹԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ

Կեսօրից հետո, ժամը 13.30-ին, Կորդովահայ համայնքը ողջերթի ճաշկերույթ և մատաղի օրհնություն էր կազմակերպել ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Ճաշկերույթին ներկա էին գաղութի բոլոր կազմակերպությունների և միությունների ներկայացուցիչներն ու անդամները, քույր Եկեղեցիների հոգևորականները և շուրջ 300-ի հասնող հավատացյալներ:

Մատաղի օրհնությունից հետո հանդիսությունը բացեց Կորդովայում «Հայաստան» հիմնադրամի ատենապետ պրն. Խուան Կառլո Մերդիյանը, որը ներկայացրեց պատվո սեղանին մաս կազմող անձնավորություններին:

Ապա շնորհակալության և երախտագիտության խոսքով հանդես եկավ Կորդովահայ գաղութային միության ատենապետ պրն. Էդուարդո Կետիկյանը:

Ճաշկերույթի ընթացքում Արգենտինայում ՀՀ դեսպան պրն. Վահան Տեր-Ղևոնդյանը ՀՀ անձնագրեր հանձնեց Եղեռնից վերապրած և Կորդովայում բնակություն հաստատած երկու հայորդիների՝ Մարտիրոս Սիմոնյանին և Միհրան Ապատյանին:

Հանդիսության վերջում ներկաներին օրհնեց Վեհափառ Հայրապետը՝ շնորհակալություն հայտնելով այսքան ջերմ ընդունելության և գոհունակություն՝ գաղութի այսքան միասնական կյանքի և գործունեության համար: Այնուհետև Նորին Սրբությունը բացատրեց մատաղի խորհուրդն ու բովանդակությունը և հորդորեց ամուր կերպով փարվել քրիստոնեական հավատքին ու ապգային ավանդույթներին:

ՎԵՐԱԴԱՐՁ ԲՈՒՆԵՆՈՍ ԱՅՐԵՍ

Ժամը 18.00-ին Վեհափառ Հայրապետը Կորդովայից կրկին վերադարձավ մայրաքաղաք Բուենոս Այրես՝ շարունակելու իր հովվապետական այցելությունը մայրաքաղաքում:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ «COUNTRY CLUB»

Երեկոյան ժամը 20.00-ին Վեհափառ Հայրապետը այցելեց հայկական «Country Club» կոչվող շրջան, որը բնակեցված է միմիայն հայերով: Այստեղ կազմակերպվել էր մեծ ընդունելություն տեղի բնակիչների կողմից ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի:

Շրջանի մեծ սրահում, ի նշանավորումն Վեհափառ Հայրապետի այցելության, հուշատախտակի բացումից հետո բարիգալստյան խոսքով հանդես եկավ թեմական խորհրդի կենտրոնական վարչության անդամ պրն. Մնդրե մայրանը: Ապա շուրջ 250 հոգիների մասնակցությամբ ճաշկերույթ տրվեց ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ճաշկերույթի վերջում ներկաներին իր հայրական պատգամը հղեց Նորին Սրբությունը՝ նախ գոհություն հայտնելով Ամենակալ Աստծուն այս հեռավոր ամիսներին հայության կյանքի այսքան բարգավաճման համար և ապա բոլորին հրավիրեց իրենց կարելիություններով մասնակցել հայրենաշինության և եկեղեցաշինության սրբապան գործին: Վեհափառ Հայրապետը իր անթաքույց գոհունակությունը հայտնեց, որ երբեմնի գաղթական հայությունը, որ ժամանակին այստեղ և այլուր Մեծ եղեռն-արհավիրքից հետո մի կտոր հացի օրախնդրով էր ապրում, իր հոգեկան մեծ ուժի, անկոտրում կամքի և մշտապես առաջադիմելու, բարին, գեղեցիկը արարելու ներքին մղվածությամբ և ունակությամբ կարողացել է բարեկեցիկ պայմանների և բարձր դիրքերի հասնել:

«Բայց պետք չէ սահմանափակվել միայն անձնական՝ անհատական բարեկեցությամբ: Այսօր Հայրենիքն ու եկեղեցին մեր բոլորի կարիքն ունեն և հրավիրում են մեզ ամբողջական մասնակցությամբ և ինքնանվիրումով վերացնել նրանց ճակատի բոլոր կնճիռներն ու խորշովները, որոնք յուրաքանչյուրիս են պատկանում: Եթե մեր հայերը դժվարությունների և ծանր պայմանների մեջ ապրելով, իրենց վերջին լուծման ներդնելով կարողացել են փառավոր եկեղեցիներ ու տաճարներ կառուցել Աստուծո փառքը գովերգելու և սեփական ազգի իրական նկարագիրն ու դիմագիծը արտահայտելու համար, ապա այսօր մեզ ի՞նչ է պակասում այդ սուրբ և սրբացնող ոտնահետքերով քայլելու համար: Ուրեմն Աստծու հովանավորությամբ և մեր սեփական ձեռքերի զորությամբ գործելով ցույց տանք աշխարհին, որ հայի դիմագիծը չի խամրել և երբեք էլ չի խամրելու, որովհետև գոյություն ունի այսպիսի պատվով ապրող և գործող մի կենդանի ժողովուրդ: Հետևաբար, լծվենք աշխատանքի՝ ի շինություն և ի բարգավաճումն Մայր եկեղեցու և Մայր Հայրենիքի: Նրանք են մեր մայրը, և մենք լինենք նրանց արժանավոր որդիները», եզրափակեց Հայոց Հայրապետը:

11 ՕԳՈՍՏՈՍ, ԿԻՐԱԿԻ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ստավույան ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը, առնթերակայությամբ Գյուտ և Տաթև սրբապանների, մեծաշուք թափորով, ամպիոփանու ներքո մուտք գործեց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի: Սուրբ Պատարագին ներկա էին ՀՀ դեսպան Վահան Տեր-Ղևոնդյանը, քույր եկեղեցիների առաջնորդները, համայնքի բոլոր



Ա. Պատարագ Բուենոս Այրեսի Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում

կապմակերպությունների և միությունների ներկայացուցիչները, թեմի յոթ վարժարանների ամբողջ աշակերտությունը և ավելի քան 3000 հավատացյալներ:



Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ՎԵՐԱԾԱՌ ԳԱՅՐԱԴԵՏԸ ՍԿԻՂ ԳԱՆՁՆՈՒՄ Է ԳԻՍԱԿ ՍՐԲԱԶՍՆԻՆ

Հընթացս Սուրբ Պատարագի քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ առանցք ունենալով՝ հավատքի սրբարար գաղափարը. «Նույնիսկ անհավատը հավատք ունի հավատալով իր անհավատությանը»: Ապա, խոսելով մեր ժողովրդի կյանքում առ Սատված ունեցած հավատքի շնորհիվ կատարված իրագործումների մասին, նշեց, որ մենք այդ հավատքով ենք վերջնականապես ձևավորվել և արտահայտել մեր ազգային ինքնությունն ու դիմագիծը: Եվ այսօրվա ապատ ու անկախ Հայաստանին այդ հավատքի ներշնչողն ու մատակարարը նոր կյանքով ապրող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է. «Սուրբ Էջմիածինը դարե՛ր և դարե՛ր շարունակ եղել է հայ ժողովրդի լույսի՝ հավատքի մատակարարն ու մատուցակը կյանքի բոլոր մակարդակների և աստիճանների վրա: Սակայն այսօր այն պետք չէ դիտել որպես սոսկ մի սիմվոլ՝ հայ ժողովրդի փառքի, այլ այն այսօր վերարթնացման ու վերաշխուժացման օրերն է ապրում և այն պետք է դառնա հիմնաքար մեր ապագայի տեսիլքների իրականացման: Սրբազան շարականագիրն ասում է. «Եկայք շինեցուք Սուրբ Վհորանն Լուսոյ»: Ուրեմն եկեք վերածաղկեցնե՛նք այսօր այդ Լույսի՝ մեր Տիրոջ և մեր ազգի Սուրբ խորանը, «քանզի ի սմա ծագեաց մեզ Լոյս ի Հայաստան աշխարհի»:

Իր հայրական խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետը, ի նշան գնահատանքի և սիրո, Արգենտինայի Հայոց Սուաքնորդ Գիսակ սրբազանին նվիրեց Էջմիածնում պատրաստված մի սկիհ՝ ասելով, որ «Այս սրբազան անոթի մեջ երբ պատարագվի մեր Տիրոջ՝ Հիսուս

Քրիստոսի մարմինն ու արյունը, ճաշակելիս հոգեպես պզաք նաև. որ Սուրբ Էջմիածնի՝ առ Աստված տանող, վեհացնող, ավսվացնող հոգին է միախառնված այդ սրբապան խորհուրդի հետ»:

Հավարտ Սուրբ Պատարագի վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ հոգեհանգստյան աղոթք և ծաղկեպսակի պետեղում եկեղեցու բակում գտնվող Ապրիլյան նահատակների հուշակոթողի առջև:

Այնուհետև Նորին Սրբությունը կատարեց եկեղեցուց փոքր ինչ հեռու գտնվող Թեքեյան Մշակութային Միության կենտրոնի մուտքի մոտ նոր կառուցվող Սարդարապատի հերոսամարտի հուշարձանի հիմնարկեքն ու տեղի օրհնությունը: Հիմնարկեքից հետո վեհափառ Հայրապետին շնորհակալության և երախտիքի խոսք ուղղեց «Սարդարապատ» թերթի փոխանորեն Սերգո Նահապետյանը:

«Վեհափառ Տեր,

Տարիներ առաջ, երբ մեր ազգային բարերար, Նյույորքաբնակ Տիար Սուրեն Ճիսճյան ուզեց օժտիլ Թ. Մ. Միությունը մոր կենտրոնով մը Բուենոս Այրեսի այս եզակի Արմինիա փողոցին վրա, ուր հիմնած ենք մեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարը, Ապրիլյան նահատակներու հուշարձանը, դպրոցները, միություններ և թերթեր, որոշեցի՞նք կառուցանել նաև մեր ազգային անկախության և ազատության անմահական զգացումը խորհրդանշող Սարդարապատի հուշարձանը: Սարդարապատը արցունքը կվերածե ժպիտի, դառնությունը՝ ուրախության, անցյալի վեճերը՝ միասնականության, և տառապանքը՝ հավիտենական երջանկության:

Մառալելը Հայ Եկեղեցվո և Հայ ազգին եղած է մեր գոյության նշանաբանը, և այսօր կզգանք, որ Աստված պարգևած է մեզի նաև այս պատվական և պատմական առիթով, որ ձեր ներկայությամբ ու օրհնությամբ, Վեհափառ Տեր, հանձնենք Հայ ժողովուրդին ու պատմության և գալիք սերունդներուն այս հավերժական ազատ մնալու ուխտը: Կաղոթենք ու կխնդրենք Աստուծմե, որ Տերը լուսավորե ձեր ճամփան, պարգևե ձեզի, Վեհափառ Հայր, երկար կյանք և առողջություն և անսասան պահե Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու Հանրապետությունն Հայոց:

Կփակեմ խոսքերս՝ հիշելով Վահան Թեքեյանի այն խոսքերը, որ ինչքան օղբ, ջուրը և հացը անհրաժեշտ են ապրելու համար, այսուհետև նույնպես անհրաժեշտ է հպարտությունը:

Հպարտ ենք մեր Հայ Եկեղեցիով, հպարտ ենք մեր Ազատ ու Անկախ Հայաստանով, հպարտ ենք մեր հաղթական ժողովուրդով»:

Վեհափառ Հայրապետը իր ոգեշունչ խոսքով վեր հանեց Սարդարապատի հերոսների սիրանքը՝ այն համարելով հարատևող և շարունակական նաև ներկա սերունդների համար, որովհետև «Սարդարապատը հայության հավերժագնաց ընթացքն է: Այն մեր ինքնության, վճռականության և վճռականության, միության և միասնության հաղթանակի դրսևորումն է: Սարդարապատը մեր ապատ ապրելու կամքի և

անկախության վկայագիրն է, որով հայ ժողովուրդն իր հավատարմությունը հայտնեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հավատքին և Աստվածապարզ Հայրենիքին՝ ոչինչ չխնայելով նրանց պաշտպանության համար: Սարդարապատը սոսկ մեկ ճակատամարտով չավարտվեց, այն շարունակվում է մինչև այսօր այնտեղ, որտեղ խնդիր կա հայապահպանության», եզրափակեց Վեհափառ Հայրապետը:

ՄԱՏԱՂԱՋԱՇ ՀԱՅ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՐԱՀՈՒՄ

Սուրբ Պատարագից հետո, ժամը 14.00-ին, Հայ Կենտրոնի սրահում շուրջ 2500 հոգի ներկա գտնվեցին ի պատիվ Վեհափառ Հայրապետի տրված մատաղաճաշին: Բացման խոսքով հանդես եկավ վարչության անդամ Խորխե Կարամանուկյանը: Ճաշկերությանը Վրացի ընթացքում, հատուկ պատրաստված մեծ պաստառների վրա ցուցադրվում էր Վեհափառ Հայրապետի Արգենտինա կատարած այցելության կինոժապավենը:



ՎԵՐԱԳՈՐԴ ԳԱՅՐԱՊԵՏԸ ԵՐԶԱՊԱՏՎԱԾ ՍԿՈՒՏՆԵՐՈՎ

Ճաշի ընթացքում Նորին Արքունիքը շրջեց Հայ Կենտրոնի բոլոր սրահներում և եկեղեցու բակում, որտեղ հավաքվել էին բազմաթիվ հավատացյալներ՝ մտերմորեն խոսելով և զրուցելով նրանց հետ:

Այնուհետև ՀՀ դեսպան Վահան Տեր-Ղևոնդյանը Եղեռնից վերապրած 15 հոգիների հանձնեց ՀՀ քաղաքացիության անձնագրեր՝ այսպիսով վկայելով, որ Հայոց Անկախ Պետությունը անտարբեր չէ իր աշխարհասփյուռ զավակների նկատմամբ և իր ամբողջ կարելին ի գործ է դնում նրանց, նախ ըստ արժանվույն գնահատելու և ապա հրավիրելու մասնակցության Մայր Հայրենիքի վերածաղկման գործին:



Գարեգին Ա Վեհապետ Հայրապետը շնորհալուծված դպրոցականներով

Տաթև և Գյուտ սրբապանները, ՀՀ դեսպանության երկրորդ քարտուղար պրն. Ռուբեն Մոսյանը, Կենտրոնական վարչության ատենապետ պրն. Էդուարդո Քարամյանը:



Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց նախագահին, որ այսքան մեծ հնարավորություններ է ստեղծել իր ժողովրդի վավակների ազատ ապրելու և աշխատելու համար: Սպա, դեպի Հարավային Ամերիկա՝ անծանոթ երկիր հայ ժողովրդի գաղթի կարճ պատմական ակնարկը կատարելով, Վեհափառ Հայրապետն ասաց. «Մեր ժողովուրդը այս երկիրը եկավ գաղթական, բայց այժմ դարձել է լիիրավ քաղաքացի: Նա երբեք բեռ չեղավ ձեր ժողովրդի վրա, այլ նույնիսկ կիսեց արգենտինյան ժողովրդին բաժին ընկած դժվարությունները»: Նորին Սրբությունը նաև շնորհակալություն հայտնեց այն բանի համար, որ Արգենտինյան պետությունը մշտապես աջակից է եղել հայ ժողովրդին և նորանկախ Հայաստանի Հանրապետությանը:

Խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետը նախագահ Մենեմին փոխանցեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ողջույնները:

Իր հերթին նախագահ Կադլուս Մենեմը իր գոհունակությունը հայտնեց երկրի հայության համար՝ նշելով, որ ինքը շրջապատված է հայ բարեկամներով, որոնցից մեկը հանդիպմանը ներկա գտնվող Դրամահատման Տան նախագահ Արմանդո Կոստանյանն է:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած նման գնահատանքի համար նախագահ Կադլուս Սաուլ Մենեմին պարգևատրեց Հայ Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանով:

ՀԱՆԳԻՊՈՒՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԳԱՏԱՐԱՆՈՒՄ

Հանրապետության նախագահի հետ հանդիպումից հետո, ժամը 11.15-ին, Վեհափառ Հայրապետին և իր շքախմբին Գերագույն

Դատարանի պայատուով ընդունեց Արգենտինայի Գերագույն Աստանի նախագահ դոկտ. Խուլիո Սալվադոր Նասարենոն, որին ընկերակցում էին փոխնախագահ դոկտ. Էդուարդո Մոլինե Օ'Քոննորը և նախարար դոկտ. Անտոնիո Բոգգիանոն:



Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության ներկա սահմանադրական կառուցվածքը, ապա կարճ տեղեկություններ հաղորդեց Հայ Եկեղեցու մասին, որ այն նախկինում պետականության բացակայության պայմաններում վարել է նաև դատարանական պաշտոնը:

Գերագույն Աստանի նախագահ դոկտ. Նասարենոն բարձրորեն գնահատեց արգենտինահայ ժողովրդին՝ հավաստելով, որ Արգենտինայի հայերը պետության կարգապահ, օրինապահ և հավատարիմ քաղաքացիներն են, և շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ իրենց ընծայված մեծ պատվի համար:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ԵՎ ԿՐՈՆԻՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ժամը 12.00-ին Ամենայն Հայոց Հայրապետն ընդունվեց Արտաքին գործերի և Կրոնից նախարարության կողմից: Ի հարկի Արտաքին գործոց նախարարի բացակայության Վեհափառ Հայրապետին ընդունեց Կրոնից նախարար Անխել Մենտենոն: Այս հանդիպմանը ներկա էին Բուենոս Այրեսի բոլոր եկեղեցական հարանվանությունների առաջնորդներն ու ներկայացուցիչները՝ թվով շուրջ 50 հոգի:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Կրոնից նախարար Անխել

Սենտենոն, որը Արգենտինայում միջեկեղեցական և կրոնական կյանքի պարզացման իմաստով կարևորեց Վեհափառ Հայրապետի այս պատմական այցելությունը: Այս բարձրորեն գնահատեց հայության բերած մասնակցությունը երկրի հոգևոր, մշակութային «շինարարության» մեջ:



Այնուհետև Վեհափառ Հայրապետը, շնորհակալություն հայտնելով հայության վարկի մասին ասված ջերմ խոսքերի համար, նշեց, որ Հայ Եկեղեցին հավատացողն է և ջատագովներից մեկը եկեղեցական միության ու Եկեղեցիների միջև սիրո, եղբայրության ամրապնդման ճշմարտության. «Այսօրվա աշխարհայնացող բարքերում Եկեղեցիների համատեղ գործակցությունը անհրաժեշտ և հրատապ հարց է: Եվ Հայ Եկեղեցին եղել և մնում է եկեղեցական բոլոր հարցերը երկխոսության և փոխադարձ հասկացողության ու ըմբռնողության ճանապարհով լուծելու քաջալերողներից մեկը»:

Այնուհետև Հայոց Հայրապետն ընդհանուր գծերով անդրադարձավ Հայ Եկեղեցու 1700-ամյակի տոնակատարությանը և այն համարեց ողջ քրիստոնյա աշխարհի ձեռքբերումը, և որ այն սոսկ հայ ժողովրդին կամ Հայ Եկեղեցուն չի պատկանում, այլ համաքրիստոնեական տարողություն և նշանակություն ունի: Այս, Վեհափառ Հայրապետը հրավիրեց բոլոր քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին մասնակցել Ընդհանրական Եկեղեցու ծոցում տեղի ունեող այս սրբապան իրադարձությանը:

Կրոնից նախարարի և Վեհափառ Հայրապետի միջև փոխանակված խոսքերից հետո նախարարության շենքում ճաշկերույթ տրվեց ի պատիվ Հայոց Հայրապետի, որի ընթացքում Նորին Սրբությունը գործնական և մտերմիկ կրույցներ ունեցավ քույր Եկեղեցիների գրեթե բոլոր ներկայացուցիչների հետ:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ

Ավարտելով երկրի բարձրագույն պետական ներկայացուցիչների հետ հանդիպումները, Վեհափառ Հայրապետը ժամը 15.00-ին այցելեց քաղաքի արվարձան, Վիսենտե Լոպեսի Սուրբ Գևորգ եկեղեցի: Եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Արշամ քահանա Բուդյանի գլխավորությամբ հավատացյալների մի մեծ բազմություն եկեղեցու մուտքին դիմավորեց Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Հայրապետի «Հրաշափառ»-ով եկեղեցի մուտք գործելուց և գոհարանական աղոթքից հետո, հակիրճ խոսքով Նորին Սրբությանը այս կամարներից ներս բարի գալուստ մաղթեց Սոաջնորդ Գիսակ սրբապանը և հրավիրեց, ինչպես մյուս վայրերում, այստեղ ևս իր հայրական պատգամը տալու Վիսենտե Լոպես շրջանի հայ հավատացյալներին:

Վեհափառ Հայրապետը նախ փառք և գոհություն հայտնեց Աստծուն, որ առիթ ընծայեց իր անձի միջոցով Սուրբ Էջմիածինը այստեղ ևս ներկայացնելու և Մայր Աթոռի ու Հայրենիքի հետ շարունակական կապ ստեղծելու համար: Այնուհետև Նորին Սրբությունը, մեկնելով «Պահպանիչ» աղոթքի «փրկեալ զմեզ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն» հատվածը, ասաց. «Երևելի թշնամին երևացող տեսնվող թշնամին է, որի մասին մենք բոլորս քաջ գիտենք և պարզ ու հասկանալի է: Բայց ո՞րն է աներևույթ թշնամին. ես այն համարում եմ մեր ներքին մարդուն փչացնող, սպանող երևույթները: Երբ մարդ, տարված կյանքի չնչին հարցերով և կաշկանդող երևույթներով, չի կարողանում ծառայել ավելի մեծ և վեհ գաղափարների, իր կյանքի օրերն անցկացնում է դաշտի ծաղիկի կամ խոտի նման:

Ապրելը այլ բան է, նպատակամղված, առաքելության գիտակցումով ապրելը՝ մեկ այլ բան: Սոաջինը ապրել չէ, այլ գոյություն ապահովել՝ կենդանական կամ բուսական աշխարհի նման, որը սոսկ բնախոսական կյանքն է: Իսկ նպատակով, գաղափարով ապրելն է, որ արժեք է տալիս այդ կյանքին՝ դառնալով բարիք ոչ միայն քեզ համար, այլ նաև ընդհանուրի՝ ազգի, եկեղեցու, Հայրենիքի համար: Հետևաբար, ինքնաքննությամբ թոթափենք և հաղթենք այդ մեր ներքին թշնամուն և աղոթենք Աստծուն, որ անընդհատ հեռացնի մեզանից այդ փորձությունը: Ձեր եկեղեցին կոչված է Սուրբ Գևորգ զորավարի անունով: Այն խորհրդանիշն է քաջության, կամքի և նախանձախնդրության դրսևորման, որ կարողացավ Տիրոջ հավատքի զորությամբ հաղթել բոլոր երևելի և աներևույթ թշնամիներին: Հետևաբար, մեր առջև ունենալով նրա կյանքը, ապրենք այդ ոգով՝ վասն փառացն Աստուծո և վասն շինության և հաստատության մեր Սուրբ եկեղեցու և սփյառ Հայոց, ի պայծառության և վերանորոգության նորոգ պատագրյալ Հանրապետությանս Հայոց. Ամեն»:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Ժամը 18.00-ին Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ իրեն ընկերակցող հոգևորականների, ՀՀ դեսպան պրն. Վահան Տեր-Ղևոնդյանի և քարտուղար Արմեն Մեծատուրյանի, այցելեց Բուենոս Այրեսի կենտրոնական մասում գտնվող ՀՀ դեսպանատուն, որի նվիրատվությունը կատարել է «Պողոս Արզումանյան» հիմնադրամը՝ ղեկավարությամբ Արմեն և Սիրանույշ Մեծատուրյան-Արզումանյանների:



ՎԵՋԱՓՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՐՀՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ

Դեսպանատանը Վեհափառ Հայրապետին դիմավորեցին ՀՀ դեսպանության երկրորդ քարտուղար պրն. Ռուբեն Մուկյանը, քարտուղար Արա Այվազյանը:

Բնականորեն ստեղծվեց շատ մտերմական և հարազատ մթնոլորտ, որովհետև այս շենքը մի փոքրիկ հայկական հողակտոր էր հեռավոր Արգենտինյան երկրում: Դեսպան Վահան Տեր-Ղևոնդյանը Վեհափառ Հայրապետին ծանոթացրեց նախ դեսպանատան կապմի և կատարված աշխատանքների հետ, մանավանդ մեծ գոհունակությամբ խոսեց դեսպանատան երկրորդ քարտուղար Ռուբեն Մուկյանի զանազան ոլորտներում կատարած մեծ ծավալի աշխատանքի և քարտուղար Արա Այվազյանի անշահախնդիր գործունեության մասին: Հարգարժան դեսպանը իր խորին շնորհակալությունները հայտնեց Արմեն և Սիրանույշ Արզումանյան-Մեծատուրյաններին, որոնք բոլոր հարցերում պատրաստակամ են օգնելու և աջակցելու Հայաստանի Հանրապետության դեսպանատան աշխատանքներին և ընդհանրապես Հայրենիքի պատիվը և անունը բարձր պահելուն: Ապա Վեհափառ Հայրապետը

բարձրորեն գնահատեց բոլոր կատարված աշխատանքները և հատկապես Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչման ուղղությամբ կատարված դիվանագիտական աշխատանքները և հորդորեց՝ է՛լ ավելի աշխուժացնել դրանք օտար պետությունների առջև Մայր Հայրենիքի վարկանիշի բարձրացման համար: Վեհափառ Հայրապետը նաև բարձրորեն գնահատեց «Պողոս Արզումանյան» հիմնադրամի ղեկավար Արմեն և Սիրանուշ Արզումանյան-Մեծատուրյանների այս հայրենաշեն նվիրումը, որով նրանք ուղղակիորեն իրենց մեծագույն նպաստը և մասնակցությունն են բերում ավատ ու անկախ Հայաստանի Հանրապետության վարգացման և բարգավաճման գործին:

ԸՆԹՐԻՔ ԿԱՐԱԳՅՈՉՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՐԿԻ ՆԵՐՔՈ

Նույն օրը, ուշ երեկոյան, Վեհափառ Հայրապետը ընթրիքի հյուրը եղավ Կարագյուղյան ընտանիքի, որտեղ վերստին խոսվեց Հայրենիքի հետ կապվածության, Սփյուռքում ազգային դիմագիծը պահպանելու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին միշտ այսպես անմնացորդ կերպով կապված մնալու մասին:

Խոսքի ավարտին Նորին Սրբությունը իր խորին շնորհակալությունն ու հայրական գնահատանքը հայտնեց՝ Կարագյուղյան ընտանիքին՝ Արգենտինա կատարած Հայրապետական այցելության կապակերպմանը իրենց բերած մեծ նպաստի համար:

13 ՕԳՈՍՏՈՍ, ԵՐԵՔԵԱԲԹԻ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՀԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ

Առավոտյան ժամը 09.30-ին Վեհափառ Հայրապետն այցելեց Բուենոս Այրեսի արվարձան՝ Վալենտին Ալսինա կոչվող շրջանի Սուրբ Հակոբ եկեղեցի: Տ. Մատթեոս ավագ քին. Գույումջյանի գլխավորությամբ, ժողովրդական խանդավառ ընդունելությամբ, Նորին Սրբությունը «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի: Եկեղեցում գոհաբանական աղոթքից և Առաջնորդ Գիսակ սրբապանի խոսքից հետո Վեհափառ Հայրապետը իր օրհնությունը բաշխեց հավատացյալ ժողովրդին՝ խոսելով Հակոբ Մծբնա. Հայրապետի մասին, հորդորելով կատարելության ձգտման մեջ օրինակ ունենալ նրա կյանքը և գործը. «Սուրբ Հակոբի օրինակը ձգտումն ու ճիգն է դեպի կատարելություն: Մարդը չի կարող կատարյալ լինել, որովհետև կատարյալը Ինքը՝ Աստված է, բայց կարևորը ձգտումն ու ցանկությունն է մղվել դեպի կատարելություն: Սուրբ Հակոբը չհասավ Արարատի բարձունքը՝ կատարելության, բայց ցանկացավ հասնել և հաղթահարել այդ բարձունքը: Եվ Աստված, տեսնելով այդ ճիգը, պարգևեց նրան Նոյան Տապանի մասունքը»:

Ապա, խոսելով Հայաստանի նորօրյա կացության մասին, Նորին Սրբությունն ասաց. «Մեր երկրում այժմ զարուն է, և ես ցանկանում եմ, որ յուրաքանչյուր մարդ այդ զարնանը հաղորդվի: Եվ Սուրբ Հակոբ

եկեղեցին ձեզ գարուն բերող փոքրիկ օջախներից մեկն է: Այսօր Արարատեն եկող հպումն է, որ զգում եք ձեր ձեռքերուն և ձեր մեջ: Հայաստանը հավատքի սպունգ է ամբողջ հայ ժողովրդի համար: Եկե՛ք, արբեցեք և ներծծվեք այդ սպունգով, որպեսզի դուք էլ Հայաստան հավատքի սպունգեն առնեք և հավատքի գարունը տարածեք այստեղ և Սուրբ Հակոբի նման ձգտեք Արարատ լեռը բարձրանալ»:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

«ԽՐԻՄՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ

Ժամը 10.45-ին Վեհափառ Հայրապետն այցելեց «Խրիմյան» վարժարան և տնօրեն Հովհաննես Գենգյանի ու ժողովրդի խոսներամ բազմության ուղեկցությամբ առաջնորդվեց վարժարանի «Հակոբ Մեֆերյան» սրահ:

Հանդիպումը բացեց «Խրիմյան» կրթական հատատության տնօրեն պրն. Միշա Մեֆերյանը: Դպրոցի տնօրենության և ուսուցչական կազմի շնորհակալության և երախտիքի պաշտոնաթղթերը հայտնեց ուսուցչուհի Նվարդ Ալմուխյանը: Այնուհետև Նորին Արքունիքի բարի գալուստ մաղթեց Վալենտին Ալսինայի կառավարիչ Մանուել Կինդիմիլը, որից հետո ներկաներին իր պատգամը տվեց Վեհափառ Հայրապետը՝ խոսելով դպրոցի էական նշանակության և դերի մասին:

Նորին Արքունիքը նախ մտերմիկ հայրական երկխոսության բոնվեց աշակերտության հետ, ապա անդրադարձավ դպրոցի, ուսման, կրթության կարևորությանն ու անհրաժեշտությանը՝ հատկապես վեր հանելով հայ ժողովրդի զավակների կրթությամբ և լուսավորությամբ նախանձախնդիր Խրիմյան Հայրիկի լուսավոր կերպարը, որի անունով էլ կոչված է այս դպրոցը. «Խրիմյան Հայրիկը իր կյանքը նվիրեց այսպիսի մանուկների կրթության գործին, մասնավորաբար գավառում և գյուղական շրջաններում:

Սիրելի աշակերտներ, արժեցրեք այն անունը, որ կրում է ձեր դպրոցը՝ ձեր հայերեն լեզվի և գրականության, հայոց պատմության, մեր Հայ եկեղեցու պատմության և ավանդությունների լավ իմացությամբ և գործադրությամբ»:

«ԲԱՂՁԵՉՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետն այցելեց Արգենտինյան դպրոցի մի մասը կազմող «Բաղչեյան» հայկական վարժարան: Հայկական մասի պատասխանատու Ալիսա Թորոսյանի և ընդհանուր դպրոցի տնօրենուհի Մարիա Կոպուլայի խոսքերից հետո, Վեհափառ Հայրապետի դպրոց այցելության առթիվ շնորհակալության խոսքով հանդես եկավ դոկտ. Եփրատ Բայրամյանը:

«Այսօր հուզիչ օր մըն է բոլորիս համար, որովհետև հավաքված ենք Բաղչեյան վարժարանի սրահին մեջ՝ ընդունելու համար մեր Վեհափառ Տերը:

Բաղչեջյան Ազգային վարժարանի վարչությունը իր բոլոր հանձնախումբերով բարի գալուստ կմաղթե մեր թանկագին հյուրին:

Բուենոս Այրեսի ծայրամասերեն Վիժա Սուլտաթիի շրջանը եղել է արժանթինաիզ գաղութին հիմնադրարեն մին, որովհետև հետզհետե այս ափերը հասնող առաջին գաղթականները մեծ առ մասամբ համեստ պատրաստությամբ և նյութական սահմանափակ միջոցներով այս թաղին մեջ ու շուրջն է, որ հաստատած են իրենց սկզբնական կայքը: Անգամ մը որ նկատելի քանակության կհասնի Վիժա Սուլտաթիի թաղին հայ գաղթականության թվական քանակը, անոնց առաջին գործը կըլլա սեփական հողերուն մեջ շինել հայ եկեղեցին և դպրոցը՝ հայապահպանության համար:

Այս հայրենակիցները ձեռք-ձեռքի տալով աշխատեցան և մեշտեղ քերին Սահակյան և Մեսրոպյան վարժարանները: Մեսրոպյան վարժարանը պատիվն ուներ հպարտանալու ամբողջ Հարավային Ամերիկայի մեջ առաջին վարժարան-մատուռը ըլլալու հանգամանքովը:

1961-ին Սահակյան և Մեսրոպյան վարժարանները միացնելով և բարերար պարոն Սահակ Բաղչեջյանի նյութական օժանդակությամբ հիմնվեցավ Բաղչեջյան Ազգային վարժարանը, 1978-ին Վազգեն Ա մանկապարտեզը, ուր մեր մանուկները կստանան հայեցի դաստիարակություն՝ սորվելով Մեսրոպյան այբուբենի հնչյունը: Անոնց համար քանացին մեր նախահայրերը՝ ստեղծելով դպրոց մը, որ 70 տարիներու ընթացքին միշտ կանգուն մնաց՝ իր սերը վառ պահելով Մայր Հայրենիքին հանդեպ:

Այս իմաստով և հակառակ բոլոր դժվարություններուն, մենք անկարելին կընենք՝ պահելու համար կրթական կյանք և մշակույթ, ուսումնական մակարդակ և հայկական մթնոլորտ: Հայ դպրոցին պայծառացումը մեր նվիրական գործն է, մեր խիղճին պարտքը, մեր գոյության ամենեն վստահելի իրականությունը:

Միյուռքի գոյատևումը անառարկելիորեն հայ դպրոցեն կախում ունի: Բոլորիս գործոն մասնակցությամբ պիտի շարունակե Բաղչեջյան վարժարանը իր վերելքը՝ օգտակար ըլլալու համար մեր ազգին և Մայր Հայրենիքին:

Կեցցե մեր Հայրենիքը:

Կեցցե մեր Վեհափառ Տերը:

Ապա Նորին Սրբությունը իր պատգամը տվեց՝ ասելով, թե «Հայ դպրոցը Սուրբ Մեսրոպի այգին է: Ինձ համար դպրոցը և եկեղեցին շենք չեն, այլ ժողովուրդ են՝ կենդանի մարդիկ: Դպրոցը պետք չէ, որ լինի նեղ, սահմանափակ, ինքնանպատակ հաստատություն, այլ մարդակերտման մի սրբապան օջախ: Այնտեղ պետք է ձևավորվի և ծնվի իրական մարդը՝ հասարակության, ազգի, Եկեղեցու շահով նախանձախնդիր մարդը: Այն մարդու գիտակցական կյանքի ծննդյան ավազանն է իմ համոզմունքով», շեշտեց Վեհափառ Հայրապետը:

Այնուհետև Վեհափառը, խոսքն ուղղելով ուսուցչական կազմին և դպրոցի բոլոր պատասխանատուներին, նշեց, որ նրանցն է «աշակեր-

տության կյանքի պատասխանատվությունը, որովհետև նրանք այժմ նման են մոմի կամ կավի և կարիքն ունեն հմուտ վարպետների: Ինչպիսի ձև ու կերպարանք այժմ տրվի նրանց, ապագայում նրանք այդպիսին էլ կներկայանան: Ուսուցչությունը դասատվություն չէ, այլ ուսուցանելն է իր ամբողջական իմաստով՝ հոգուց հոգի, սրտից սիրտ փոխանցումով»:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ «ԱՐՄԵՆԻԱ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՄԸՄ ԱԿՈՒՄԲ

Կեսօրից հետո, ժամը 13.30-ին, Վեհափառ Հայրապետն այցելեց ՀՅԴ «Արմենիա» Մշակութային Ընկերակցություն և ՀՄԸՄ-ի ակումբ, որտեղ մեծ ընդունելություն և ճաշ էր կապմակերպվել ի պատիվ Նորին Արքության:



ՎԵՅՍՓՍՈՐԸ «ԱՐՄԵՆԻԱ» ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՐԱՅՈՒՄ

Փոքրիկ զրույցից հետո, ՀՅԴ Արգենտինայի Կենտրոնական Կոմիտեի անդամ Մարիո Նալբանդյանը ներկայացրեց պատվո հյուրերին և արգենտինյան պետության ներկայացուցիչներին: Շուրջ 200 հոգիների մասնակցությամբ «Արմենիա» ընկերակցության սրահում ճաշ էր կապմակերպվել ի նշանավորումն Հայոց Հայրապետի այցելության:

Ճաշի ընթացքում բարիգալստյան և ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՅԴ Արգենտինայի Կենտրոնական Կոմիտեի անդամ պրն. Շահան Հովակիմյանը:

Ճաշի վերջում ներկաներին իր հայրական խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ պատգամելով զանազան գաղափարական տարակարծություններով և տեսակետներով հանդերձ նեցուկ և ապավեն լինել Հայաստանի նորանկախ Հանրապետությանը, որի ապահովությունից և

հարատևությունից է կախված Մայր Եկեղեցու ապատ և անկաշկանդ գործունեությունը Աստուծո փառքի և մեր ժողովրդի խաղաղ և երջանիկ կյանքի համար:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ «ԱՐՄԵՆԻՈ-ԱՐԽԵՆՏԻՆՈ» ԴՊՐՈՑ

Ժամը 15.30-ին Վեհափառ Հայրապետը այցելեց «Պողոս Արվումանյան» հիմնադրամի հովանավորությամբ կառուցված արգենտինյան «Արմենիո-Արխենտինո» դպրոց:



ՎԵՋԱՍԺՈՐ ԶԱՅՐԱՊԵՏԸ ԴՊՐՈՐՑԻ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ ՄԱՍՆԱԾԵՆՔԻ ՍՈՒՏՔԻ ՍՈՑ՝ ԵՐԶԱՊՈՍԿԱԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՎ, ԴՊՐՈՐՑԻ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՎ ԵՎ ՌԵՍՈՒՑԱԿԱՆ ԿԱԶՄՈՎ

Դպրոցի մուտքին Նորին Սրբությանը դիմավորեցին դպրոցի բարերարներ Արմեն և Սիրանույշ Մեծատության-Արվումանյանները, տնօրենուհի Մագդալենա դոս Սանթուր, ուսուցչական կազմը և աշակերտությունը:

Ներկայացված հայտագրից հետո աշակերտությանն ու ներկաներին իր խոսքն ուղղեց Հայոց Հայրապետը՝ նախ իր հիացմունքը հայտնելով այն բանի համար, որ մի օտար երկրում ոչ հայ երեխաներ հայերեն երգերով իրենց հարգանքն են արտահայտում հայ ժողովրդի և նրա Հայրապետի նկատմամբ: Այնուհետև մեծապես գնահատեց «Պողոս Արվումանյան» հիմնադրամի կատարած այս սքանչելի գործը, որը շնորհակալության յուրահատուկ գործնական արտահայտությունն է արգենտինյան պետության և ժողովրդի հանդեպ՝ հայության գաղթական բեկորներին այս ափերում ջերմագին հյուրընկալության համար:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ «ՆԱՐԵԿԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ» ԵԿԵՂԵՑԻ

Երեկոյան ժամը 18.00-ին Վեհափառ Հայրապետն այցելեց Հայ Կաթողիկէ «Նարեկի Ս. Աստվածածին» եկեղեցի: Եկեղեցու մոտ Վեհափառ Հայրապետին դիմավորեց Հայ Կաթողիկէների հոգևոր հովիվ Վարդան Եպս. Պողոսյանը:

Նորին Սրբութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի, որտեղ գոհաբանական աղոթքից հետո, առաջնորդվեց եկեղեցուն կից նորակառույց առաջնորդարան: Այստեղ ողջունի խոսքեր և հուշանվերներ փոխանակվեցին Վեհափառ Հայրապետի և Վարդան Եպիսկոպոսի միջև:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ



ՎԵՋԱԾԱՐԱՆ ԴԱՅՐԱՊԵՏՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԴԵՏ

Ժամը 19.00-ին Վեհափառ Հայրապետը քաղաքապետարանում հանդիպեց Բուենոս Այրեսի քաղաքապետ Ֆերնանդո Դե Լա Ռոսայի, քաղաքապետարանի խորհրդարանի նախագահ դոկտ. Պիկոյի և քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ: Այստեղ քաղաքապետը մի վկայագիր հանձնեց Նորին Սրբութիւնը՝ հայտարարելով նրան քաղաքի պատվավոր հյուրը: Այնուհետև Վեհափառ Հայրապետը, շնորհակալություն հայտնելով այս ջերմ հյուրընկալության համար, նշեց, որ այսպիսի ջերմությամբ դարասկսքին արգենտինյան ժողովուրդն ու պետությունը ընդունել է իր ժողովրդի գաղթական գավակներին. «Եվ այսօր տեսնելով այդ անկեղծությունն ու ազնվությունը, դուք, որ ձեր քաղաքը անվանում եք Բուենոս Այրես (մաքուր օդ), ես այն կոչում եմ Բուենոս Վիտա (մաքուր կյանք)»:

ՀՈՒՇԱՏԱՆՏԱԿԻ ՁԵՏԵՂՈՒՄ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՎԹՈՒՄ ԵՎ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԷԴՈՒԱՐԴՈ ԷՌՆԵԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Ժամը 20.00-ին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու գավթում Վեհափառ Հայրապետը նախագահեց հոգեհանգստյան արարողությանը՝ ի հիշատակ Փանոս Էռնեկյանի, որից հետո տեղի ունեցավ հուշատախտակի բացումը՝ ի նշանավորումն Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի այցելության: Այս Լորին Սրբությունը, զնահատելով Էդուարդո և Անդրանիկ Էռնեկյան եղբայրների հայրենանվեր գործունեությունը, հորդորեց ավելի եռանդով մասնակցել հայրենաշինության գործին՝ մանավանդ սատարելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի աշխատանքներին:

Արարողությունից հետո պրն. Էդուարդո Էռնեկյանը Հայ Կենտրոնի սրահում մեծ հյուրասիրություն կապմակերպեց՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

14 ՕԳՈՍՏՈՍ, ՉՈՐԵՔԵԱԲԹԻ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ

Սոսվոտյան ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը մեծ շքախմբով այցելեց Արգենտինայի Հանրապետության Ազգային Կոնգրես: Կոնգրեսի ընդունելության սրահներից մեկում Հայոց Հայրապետին և իրեն ուղեկցող շքախմբին ընդունեց Ազգային Մենատի ժամանակավոր նախագահ Էդուարդո Մենեմը, որին ընկերակցում էին սենատորներ Խուան Ռամոն Ագիրե Լանարին, Լուիս Լենոն, Օմար Վակիրը:



ՎԵՅԱԺԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԶՐՈՒՅՈՒՄ Է ԷԴՈՒԱՐԴՈ ՄԵՆԵՄԻ ԴԵՏ

Ալգալին Կոնգրեսի նախագահի ողջույնի խոսքից հետո Վեհափառ Հայրապետը իր պատասխան խոսքում կարևորեց օրենսդրական մարմնի դերն ու նշանակությունը, որը ապահովում է երկրի բնականոն կյանքը: Այա Նորին Սրբությունը նշեց, որ Հայ Եկեղեցին ևս ժամանակին եղել է հայ ժողովրդի ոչ միայն հոգևոր, այլև օրենսդիր բարձրագույն մարմինը: Վերջում Վեհափառ Հայրապետը ջնդրհակայություն հայտնեց, որ երկրի պետական բարձրագույն մարմինները այսպիսի ջերմությամբ ընդունեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որը խոսում է հայ ժողովրդի բարի անվան և վայելած պատվի, ինչպես նաև Արգենտինայի Հանրապետության, Հայ Եկեղեցու և նորանկախ Հայաստանի Հանրապետության նկատմամբ ունեցած հարգանքի մասին:

ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Ժամը 12.30-ին Վեհափառ Հայրապետը Հայ Կենտրոնի կապակերպմամբ և ՀՀ դեսպանության ու Միջազգային Հարաբերությունների արգենտինյան խորհրդի հովանավորությամբ «Ալվեառ Պալաս» հյուրանոցի մեծ սրահում ելույթ-դասախոսություն ունեցավ շուրջ 200 ներկաների առջև «Հայաստան. 17 դարերի վկայություն» թեմայով: Դասախոսությանը ներկա էին Ռուսաստանի, Հունաստանի, Իրանի, Սիրիայի, Հարավսլավիայի, Լիբանանի դեսպանները, Նոբելյան մրցանակի դափնեկիր Պերես Դե Էսքիվելը և այլ պետական, ազգային ներկայացուցիչներ:



ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՐԻՆ

Վեհափառ Հայրապետը մանրակրկիտ կերպով, քարտեզների օգնությամբ, խոսեց Հայաստանում քրիստոնեության ծագման, պետականորեն ընդունման և ապա հայ կյանքի վանապան ոլորտներում նրա խաղացած դերի և նշանակության մասին:

ՀԱՅԱՍՏԱՆ. 17 ԴԱՐԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ձերդ Գերազանցություն՝ Արգենտինայի Միջազգային կապերի խորհրդի նախագահ,

Միրելի եղբայրներ և քույրեր,

Շատ նշանակալից է հովվապետական այս անդրանիկ այցելությանն ընթացքին գտնվել ձեր՝ հայազգի և արգենտինացի բարեկամների մեջ և այն մարդկանց շրջապատում, որոնց հետ ես կիսում եմ համընդհանուր նշանակություն ունեցող կամ էլ մասնավոր ազգային հետաքրքրություններ ներկայացնող խնդիրներ:

Այս իմաստն ունի ինձ համար Արգենտինայի Միջազգային կապերի խորհուրդը ամուսնը: Եվ ես նախ և առաջ հարց եմ տալիս ինքս ինձ. Արդյո՞ք մեր օրերում կան խնդիրներ, որոնք իրենց բնույթով, կարևորությամբ և տեսանկյունությամբ միջազգային և միջեկեղեցական նշանակություն չունենան:

Մենք ապրում ենք փոխկապակցեալ (իրարից կախում ունեցող)՝ ոչ անկախ աշխարհում: Մենք ապրում ենք հաղորդակցության աշխարհում, ոչ մեկուսացված: Ահա թե ինչու այսօր, երբ ես Բուենոս Այրեսում եմ, նույն հոգսերով ապրող բարեկամների շրջապատում, կցանկանայի խոսել Հայաստանում Քրիստոնեական Վկայության 17 դարերի որոշ կարևոր կողմերի և հարցերի մասին:

Մենք 20-րդ դարի մայրամուտին ենք, Քրիստոնեական պատմությանը երկրորդ հազարամյակի վերջնազօհն: Մտահոգ մարդիկ վերաբժնորում, գնահատում են այն կացությունը, որի մեջ մենք գտնվում ենք այսօր. «Ուրտե՞ղ ենք մենք այսօր գտնվում: Ու՞ր են մեզ առաջնորդելու վաղը»: Եվ հետևելով մեր ժամանակների նախանշաններին, Ավետարանի միջոցով, ես տեսնում եմ, որ հոգևոր վերազարթոնքի իսկական շունչ է թևածում ողջ աշխարհում: Դարիս վերջնակետին մենք ունենք մի այնպիսի հասարակություն, ուր գերիշխում են գիտական-տեխնիկական, արդյունաբերական, նյութապաշտական արժեքներն ու նվաճումները, մարդիկ իրենք իրենց հարց են տալիս. «Մի՞թե՞ սա այն բոլորն է, ինչ մենք փնտրում էինք մարդկային կյանքի համար»: Աշխարհայնության ծայրահեղ արտահայտությունը մարդկությանը դնում է հետևյալ հարցադրման առաջ. «Արդյո՞ք մենք միայն աշխարհիկն ենք, այս աշխարհից ենք և այս աշխարհի համար ենք, թե՞ այս աշխարհից դուրս կա մի ուրիշ բան»:

Մեկ և կես տարի է, ինչ ապրում եմ Հայաստանում և ականատեսն եմ յոթանասուն տարիների աթեիստական ամբողջատիրական համակարգի հետևանքների: Հոգևոր այդ պակասը մեզ առիթ է տալիս մտածելու, թե

ինչու փլուզվեց խորհրդային այդ հին սիստեմը: Որովհետև ես վստահ կարող եմ ասել, որ հոգևոր, բարոյական արժեքները, մարդկային արժանապատվությունը կյանքի հյուսվածքից ոչնչացվել, դուրս էին մետվել մի կողմ, և ոչ միայն տեսական և գաղափարական ասպարեզներում: Բայց անշուշտ, իմ պատասխանատու աշխատանքի ճանապարհին, որքանով որ ես հետևում եմ էկոմենիկ, միջազգային, հոգևոր և աշխարհիկ բնույթի վերջերս լույս տեսած գրքերին և թղթակցություններին, տեսնում եմ, որ մի մոր հետաքրքրություն է առաջացել Արևելյան Եվրոպայի նկատմամբ:

Ի՞նչ է կատարվում Ռուսաստանում, ի՞նչ է կատարվում Լեհաստանում, Ռումինիայում կամ էլ Չեչնիայում: Ի՞նչ է կատարվում Ուկրաինայում, ողջ Արևելյան Եվրոպայում՝ մշակութային և աշխարհագրական իմաստով: Ի՞նչ է կատարվում Վրաստանում, Հայաստանում, մյուս երկրներում: Այս բոլորը հանգեցրել է Արևելյան Եվրոպայի առավել ամբողջական ընկալման և հասկացման:

Այդ առումով ես կցանկանայի մի քանի դիտարկումներ կատարել՝ իմ Մայր Հայրենիքում վկայության անխափան, շարունակական և ստեղծարար 17 դարերի քրիստոնեական վկայության առնչությամբ, որը, ես կարծում եմ, լայն առումով ճշմարիտ է նաև Արևելյան Եվրոպայի մյուս տարածաշրջանների համար:

Ես կցանկանայի մի առաջին ճշգրտում անել Հայաստանի ընկալման վերաբերյալ Արևմուտքի ունեցած պատկերացման առումով: Հայաստանը, ընդհանուր առմամբ, ներկայացված, պատկերված և նկարագրված է որպես տառապանքի, կոտորածի ու եղեռնի երկիր: Եվ, եթե այն հայերը, որոնք եկել են Արգենտինա և չեն կարողացել այլ պատկերացումները, ինչպիսին հալածված ազգի պատկերացումն է, որը եկել է այդ երկիր մոր կյանքի ակնկալիքով, դա հասկանալի է, որովհետև նա իր երկրից բռնությամբ դուրս է գցվել և ոչինչ կարողացել է իր հետ բերել, բայց միայն իր սեփական նկարագիրը, իր ցավի, բայց և իր ապրումի և հույսի զգացումով համախառն: Հետևելով, անձնապես, հայոց պատմության ողջ ընթացքին, մտածում եմ, որ այդ պատկերացումը հայ ժողովրդի բնավորության, կերպարի առումով ճիշտ էր այն ժամանակ, բայց ոչ ամբողջական և ոչ այսօր կիրարկելի: Հալածանքներից անմիջապես հետո, 19-րդ դարի վերջերից, Սուլթան Համիդի վարչակարգից սկսյալ մինչև 1915 թ. Երիտթուրքերի կողմից կազմակերպված եղեռնը, մեծ հոգեցունց, աննախադեպ փորձություններից հետո, Արևմուտքի մարդիկ հայերին նայում էին, ես քառացի մեջբերում եմ կատարում, որպես «սովալլուկ հայերի» (starving Armenians): Կաթոլիկ մի գիտնական գրող՝ Հայր Արչդելյ Քինգ անունով, իր գրքերից մեկում ակնարկում է հենց այն միտքը, որը ես մոր փորձեցի ներկայացնել: Նա գրում է. «Հայկական պատմագրությունը համաձայն է մարտիրոսագրության»: Մեկ այլ հանրաճանաչ անձնավորություն, ֆրանսիացի ակադեմիկոս Դանիել Բոքսը, որ Եկեղեցու պատմությանը նվիրված 12-ից ավելի արժեքավոր հատորների հեղինակ է, ունի

Հայաստանին նվիրված մի հատված՝ հետևյալ վերնագրով «Արյունոդ և ապրող Հայաստան»։ Նկարագրելով հայերի կացության մոայլ շատ տեսարաններ՝ թալանված գյուղեր, տեղահանված, սպանված ժողովուրդ, և այս բոլոր ողորդական դեպքերի պատկերացումից հետո նա ունի մի նախադասություն, որը, ես կարծում եմ, Հայաստանի մասին գրված ցանկացած գրքի վերնագիր կարող է հանդիսանալ։ Ես մեջ եմ բերում մի քանի նախադասություններ. «Հակառակ ամեն տեսակի վայրիվերումների և փորձանքների, այս ժողովուրդը այնպիսի հատկություններ ցույց տվեց, որոնք շոշափելիորեն փաստեցին, թե այնպիսի մի ազգ է սա՝ ազգ, որն ի վիճակի է ոչ միայն հերոսաբար դիմակայելու բոլոր կործանարար հավաքական ուժերին, այլև, որպես ինքնատիպ ազգ, շարունակելու գոյատևել ամենադաժան դեպքերի կիպակետում»։

Միրելի բարեկամներ,

Ես այստեղ եմ, որպես մի անձ, որը փորձում է ուսանել, որքան որ ի գործու է, 17-դարյա կյանքը այն երկրի, որն աշխարհագրականորեն՝ Փոքր Ասիայի միջով, Հյուսիսից և Հարավից, հինավուրց Ասորիքից, Անտիոքից և Եդեսիայից ու Կապադովկիայից ընդունել է Քրիստոնեությունը։ Քրիստոնեությունը նախ և առաջ զարգացավ Երուսաղեմում և Միջերկրականի ավազանում։ Եվ այդ հավատքը, որ Հայաստան էր հասել առաջին դարում՝ Ս. Թադեոսի և Ս. Բարդուղիմեոսի քարոզչությունների շնորհիվ, հայածվեց ժամանակի հեթանոս թագավորների կողմից։ Բայց չորրորդ հարյուրամյակի առաջին տարում Քրիստոնեական հավատքը հայոց թագավորի կողմից ճանաչվեց որպես ժողովրդի պետական կրոն։ Սակայն Հայաստանում քրիստոնեացման ընթացքը մեկ տարվա գործ չէր, այլ իրադարձությունների մի ամբողջ շղթա, որոնք ծավալվեցին ողջ հարյուրամյակի ընթացքում։ Հինգերորդ դարի արշալույսին, 406 թվականին, երբ ստեղծվեց Հայոց Աթոռները և ողջ Աստվածաշունչն ու ծիսական գրականությունը թարգմանվեցին հայերեն, եկեղեցական կյանքը ստացավ նոր՝ հայկական ինքնարտահայտում, օգտագործելով նոր արտահայտություններ, հավատքը ներթափանցեց մշակույթի մեջ, ստացավ տեղական գույն։ Ահա այդ ժամանակ է, որ քրիստոնեացման գործի ընթացքը հասավ իր գագաթնակետին։

Ես կցանկանայի անդրադառնալ այն հարցին, թե ինչու հայերը հինգերորդ դարը անվանում են իրենց պատմության Ոսկե Դարը։ Ես անձնապես հավատացած եմ, որ Քրիստոնեական հավատքը ներթափանցեց ազգային կյանքի շաղախի մեջ՝ նրա սոցիալական, ընտանեկան, առօրյա կյանքի և մշակութային ոլորտները։ Եվ ուրեմն, Քրիստոնեական հավատքը դարձավ ազգային ինքնարտահայտման բաղկացուցիչ մասը։ Հինգերորդ դարի պատմիչը, խոսելով մեր պատմության կերպարանափոխման այդ շրջանի մասին, որն այնպիսով հանգեցրեց ազգի վերափոխության վկայությանը, ասել է. «Քրիստոնեական հավատքը ոչ միայն մեր մարմնի հանդերձն է, այլև մեր մաշկի գույնը»։

Երբ 451 թ.-ին, մինչ Կ. Պոլսո կայսերական քաղաքի արվարձաններին մեկնում՝ Քաղկեդոնում, ժողով էր գումարվում քրիստոսաբանական հարցերի մասին, հայերը Ավարայրի դաշտում, Պարսկաստանի և Հայաստանի սահմանագծին, ճակատամարտ էին մղում՝ հաճուն իրենց հավատքի, կոապաշտության ազդեցության տակ չընկնելու և Հայաստանը մազդեզական կրոնի տիրապետության տակ չդնելու՝ մի խոսքով քրիստոնեական կրոնից չհրաժարվելու համար:

Ժրանսիացի գրող Ռոնե Գրոուսեն, որը հեղինակ է խաչակրաց արշավանքներին մվիրված եռահատոր մի խոշոր աշխատության և մահ Հայաստանին մվիրված մի ընդարձակ ուսումնասիրության, որը ֆրանսիական ամենահայտնի հրատակչություններից մեկի՝ «Փայոլի» կողմից լույս է տեսել «Հայաստանի պատմությունը» անունով, մի դիտարկում ունի, որն ինձ խորապես ազդել է: Գրոուսեն Ավարայրի ճակատամարտը մկարագրում է որպես Հայաստանում քրիստոնեական հավատքի պաշտպանություն հետևյալ բառերով. «Ըմբոստություն ընդդեմ մազդեզականության»:

Այս պատմաբանի հայացքով այն սոսկ ազգային գործ չէր: Այլ մի տեսակ վկայություն՝ աշխարհի այն մասի վերաբերյալ, որը ես կոչում եմ սահմանային Եկեղեցի, ինչպիսին որ Հայաստանյայց Եկեղեցին եղել է իր գոյության ողջ ընթացքին: Բայց դա սոսկ քրիստոնեական հավատքի գոյության պաշտպանություն չէր, այլ մարդկանց կյանքի վրա հավատքի ազդեցության վկայություն: Եվ ես ցանկանում եմ երկու նշումներ կատարել:

Հակառակ այն բանի, որ երբ Ավետարանը թարգմանվեց հայերեն, ժամանակի պատմիչը, որն անձամբ մասնակցել էր թարգմանական շարժմանը, գրել է. «Այժմ Աստված դարձավ հայախոս», հակառակ, որ Հայ Եկեղեցին բաց էր աշխարհի Ընդհանրական քրիստոնեական Եկեղեցու առջև, պարզ բառերով, այն սահմանփակված չէր մեղ ազգային ըմբռնումներով, ուսանողներ և հոգևորականներ ուղարկվեցին Եդեսիա, Մելիտինե, Անտիոք, Ալեքսանդրիա, Աթենք՝ հունական և ասորական մշակույթները, աստվածաբանությունը, գրականությունը ուսումնասիրելու նպատակով, և նրանց վերադարձից հետո թարգմանության շնորհիվ մեր հայկական դպրությունը հարստացավ ասորական, բյուզանդական կամ հունական եկեղեցական գրականությամբ:

Այսօր, այսքան փորձանքներից ու դժվարություններից, ճգնաժամի բազում դարերից հետո, երբ մեր ժողովուրդը ինքն իրեն կոչում է «խաչապաշտ», ես ընդամենը կասեմ, որ մկարագրությունը ամբողջական ճիշտ չէ, որովհետև, ավելի խորագնին կերպով հետևելով մեր պատմության կյանքի ընթացքին, այդ ժողովուրդը եղել է, մանավանդ, «հալուրթենապաշտ» ժողովուրդ՝ իր մեջ վառ պահելով անմահության հույսն ու ձգտումը՝ Քրիստոսի հարության ներգործությամբ:

Ամփոփելով ես կցանկանայի ասել հետևյալը. Այսօր, հայ ժողովրդի դարավոր պատմական ընթացքի ճանապարհին, մենք ականատես ենք բացվող մի նոր շրջանի: Խորհրդային Միության փլուզումից հետո, 1991

թ. սեպտեմբերի 21-ին, Հայաստանը դարձավ անկախ պետություն: Եվ Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաջնորդությամբ, այժմ անկախ է, իր վկայությունը ազատորեն ընծայելու համար Տեր Հիսուս Քրիստոսին, ազատ որևէ ճնշումից և շահագործումներից: Եվ սա մեծագույն և սրբազնագույն մարտահրավերն է, որ Աստված դրել է մեր առջև:

Որպես նորընտիր կաթողիկոս Ամենայն Հայոց ես, իմ օգնականների՝ եպիսկոպոսների, քահանաների հետ միասին, ծրագրում եմ ժողովրդի վերաքրիստոնեացման ընթացքի համար մեր հեռանկարները և միջոցները: Այսինքն Ավետարանը մեկնաբանել և մատուցել ժողովրդին՝ կյանքի նորությամբ տվյալներով և չափանիշներով: Հավատքը ներթափանցելու է մարդկանց առօրյա կյանքի մեջ ոչ միայն որպես հասկացություն կամ որևէ բանի տեսություն, այլև որպես կյանքի եղանակ: Ահա թե որտեղ մենք կարիքն ունենք եկեղեցականների մեր սերնդի, որը կարողանա այս ըմբռնումով՝ Հիսուսի պատգամների, Ավետարանի նորությամբ թարգմանությամբ, իրականացնել Եկեղեցու առաքելությունը մեր կյանքում: Այս առումով ես կարևոր նշանակություն եմ տալիս Հայաստանյայց Եկեղեցու և մյուս քրիստոնեական Եկեղեցիների միջև միջեկեղեցական կապերին: Մենք շատ ենք խոսել Էկումենիկ շրջանակներում Եկեղեցու այսօրվա դրության և կացության մասին՝ ոչ միայն ձևական միություն գտնելու իմաստով, այլև այդ միությունը մարդկության միությանը առնչելու նպատակով:

Ավելի քան 40 տարիներ ես ներգրավված եմ եղել Էկումենիկ շարժման մեջ և այսօր այնքան երջանիկ եմ, որ ձեր մեջ տեսնում եմ իմ սիրելի բարեկամ Միգել Բոնինոյին, որի հետ մենք համատեղ մատուցել ենք բազմաթիվ ծառայություններ միջեկեղեցական ասպարեզում: Ամշուշտ նա էլ է հիշում այն երկու պահերը, որոնք այնպես խորը ազդեցին իմ ներաշխարհի վրա: Երբ 1962 թվականի օգոստոսի 11-ին Փարիզում կայացած Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոնական կոմիտեի նիստում Հայաստանյայց Եկեղեցին անդամն էր դառնում այդ կազմակերպության, ԵՀԽ-ի Ընդհանուր քարտուղար, հոլանդացի աստվածաբան, այժմ երջանկահիշատակ, դոկ. Վիսլեր Վոֆթը, որն էլ դեպ Էկումենիկ շարժման միակարապետներից է, ասաց. «Ես կցանկանայի, որպեսզի Հայ Եկեղեցու անդամագրումը ընդունվի հոտնկայս, քանի որ այսօր Խորհրդի կենտրոնական կոմիտեն, որն իր մեջ պարունակում է գրեթե բոլոր քրիստոնյա Եկեղեցիները, այսօր իր ծոցում որպես լիարժեք անդամ ընդունում է աշխարհում առաջին քրիստոնեական Եկեղեցին՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որը Քրիստոսին վկայել է ոչ միայն գրականությամբ, աստվածաբանությամբ և ընկերային կյանքով, այլև իր արյամբ»: Սա է, կարծում եմ, քրիստոնեական վկայության բուն նկարագիրը: Դուք կա՛մ քրիստոնյա եք ձեր ողջ կյանքի ընթացքում կա՛մ չեք, չի կարելի մասնակիորեն կա՛մ այսօրվա համար քրիստոնյա լինել և վաղը չլինել, կա՛մ այս բանի համար լինել և ոչ մյուս

բանի համար: Եթե ձեր ողջ էությունը հազեցած է քրիստոնեական հավատով՝ դա է հենց այդ հավատքի հստակ ու հասկանալի սահմանումը:

1968 թ., դրանից վեց տարի անց, երբ մենք Եվեդիայի Ուպսալա քաղաքում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 4-րդ համագումարն էինք անցկացնում, նույն այդ անձնավորությունը՝ մեծ աստվածաբանը, մի հայտարարություն արեց, որն ինձ խորապես ցնցեց: Երբ խոսք գնաց մարդու իրավունքների, մարդկության համերաշխության, ինչպես նաև աշխարհի զարգացմանը Եկեղեցու բերելիք դերի մասին Վիսլոբ Նոթթն ասաց. «Այն մարդիկ, ովքեր մերժում էին հավատքի այս կամ այն բանաձևը, կոչվում էին հերետիկոսներ: Բայց հերետիկոսներ են նաև նրանք, ովքեր կուրկ են իրենց քրիստոնյա եղբայրներին ու քույրերին օգնելու պատասխանատվությունից»:

Միևեդի բարեկամներ, մենք մոտենում ենք երրորդ հազարամյակի շննին: Որպես Հայ Եկեղեցու ծառա ես կցանկանայի տեսնել նախ և առաջ իմ հարազատ ժողովրդին և այն մարդկանց, ովքեր իրենց համարում են մեր քրիստոնյա եղբայրներն ու քույրերը, ինչպես և մենք մեզ համարում ենք նրանց քրիստոնյա եղբայրներն ու քույրերը, և հարց տալ, թե ինչպե՞ս ենք արտացոլացնում մեր կյանքում քրիստոնեական հավատքը: Այսօր ժամանակը չէ անցյալը փառաբանելու: Պատմությունը մնում է պատմություն, պատմությունը անփոփոխ է, անցյալը՝ անցած: Ինչպես ես արդեն նշել եմ իմ մի հոդվածում, որը տպվել է էկումենիկ պարբերաթերթում. «Պատմությունը կարող է լինել բռնակալ, իսկ մենք՝ նրա գերիները, եթե ընդամենը երկրպագենք պատմությանը: Պատմությունը կարող է լինել նաև ուսուցիչ, եթե մենք կարողանանք ականջալուր լինել նրա իրագործած և մեր իրագործվելիք գործին»:

Մենք պատրաստվում ենք տոնել Հայաստանում քրիստոնեության պաշտոնապես ընդունման 1700-ամյակը: Այդ առիթով ես գրել եմ մի գրքույկ՝ «1700-ամյակը՝ Նոր Հոգեգալուստ», որում ներկայացնում եմ բացվելու Սուրբ Հոգու ներգործությանը և բերելու մեր գործուն մասնակցությունը Աստծուն և մարդկությանը մատուցելիք ծառայությանը: Իմ պարտքն եմ համարում, գալիք տարիների ընթացքում, որքան որ Աստված ինձ կյանք կպարգևի, աշխարհի ողջ քրիստոնյա քույրերի ու եղբայրների հետ միասին, որտեղ էլ որ նրանք ապրելու լինեն, կիսել քրիստոնեական վկայության 17 դարերը, որպես մեր ազգի վերանորոգման ժամանակաշրջան:

Ավարտում եմ խոսքս՝ ձեզ բոլորիդ հրավիրելով այցելելու այն երկիրը, ուր քրիստոնեության վկայության 17 դարերը նրա ժողովրդին նեցուկ են հադիսացել՝ առաջ գնալու և ոչ ետ նայելու համար, մեզ թարմ շունչ և ուժ են հաղորդել: Մենք պետք է օգտվենք ձեր հարուստ փորձառությունից և չմոռանանք, որ հարստացման ամենն առատահոս աղբյուրը մեր հավատքը, ձգտումները և նվիրաբերությունը իրար հետ քաժանելն է:

Շնորհակալություն:

Օրվա երկրորդ կեսին Վեհափառ Հայրապետը այցելեց Լիբանանի դեսպանություն, որից հետո, ժամը 17.00-ին, հյուրանոցի իր հարկաբաժնում մամլո ասուլիս ունեցավ հայկական թերթերի և մամուլի ներկայացուցիչների հետ:

ՀՐԱԺԵՇՏԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ

Երեկոյան ժամը 21.30-ին «Ալվեառ Պալաս» էլուրանոցի շքեղ հյուրասրահում, շուրջ 500 հոգու մասնակցությամբ, հրաժեշտի ճաշկերույթ տրվեց՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Ներկա էին գաղութի բոլոր հայ կուսակցությունների և կապակերպությունների, քույր եկեղեցիների և պետական հաստատությունների պաշտոնական ներկայացուցիչներ և մոտ 300 հրավիրյալներ: Ճաշկերույթի ընթացքում ելույթ ունեցան Սոաքնորդ Գիսակ սրբապանը, ապա կենտրոնական վարչության տեղնապետ Էդուարդո Քարամյանը, որն ասաց.

«Վեհափառ Տեր,

Արժանթինահայ գաղութը կապրի ցնծության և հուզումի պահեր՝ իր մեջ ունենալով Ձերդ Սրբությունը:

Այսօր հավատքի և հայրենասիրության վերանորոգումի օր է մեզի համար: Այսօր Ձեր օրհնյալ և օրհնաբեր ներկայությունը, Ձեր սիրով և իմաստությամբ լեցուն խոսքերը, Ձեր պատգամները և խորհուրդները մեզ բոլորիս կլեցնեն հույսով և արիությամբ՝ իբրև հայ և իբրև հավատացյալ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցվո, որ Էջմիածնի մայր երակեն կստանա իր սնունդը:

Ձեր այցելությունը նոր եռանդ և հայրենասիրություն պիտի ներշնչե մեզի, որպեսզի մենք շարունակենք ծառայել Հայ Եկեղեցվո, որպեսզի մենք շարունակենք պահել մեր դպրոցները և «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի միջոցով շարունակենք գորավիզ կանգնիլ մեր Մայր Հայրենիքին՝ ազատ և անկախ Հայաստանին:

Հայ Կեդրոնի վարչությունը վերջին տարիներում իր աշխատանքին կարևոր նպատակներեն մեկը դարձուցած է Հայաստանի պետականության թիկունք կանգնելը մեր գաղութի բոլոր կարելիություններով, ինչ որ ցանկությունն է և մնայուն կոչը Ամենայն Հայոց Հայրապետին:

Բարի եկաք, Վեհափառ Տեր: Ձեզմով կծաղկի մեր գաղութը:

Երկար կյանք և քաջառողջություն կմաղթենք Ձեզի, որպեսզի շարունակեք ծառայել թե՛ Քրիստոսի ազնիվ խոսքին և թե՛ ի փառս Հայաստանյայց Եկեղեցվո:

Կմաղթենք, որ անասան մնա Մայր Աթոռ Ս. Էջմիածինը»:

Այս հոգեբույս խոսքից հետո ներկաներին իր հայրական օրհնությունն ու հորդորները տվեց Վեհափառ Հայրապետը՝ կոչ անելով ամբողջանվեր և բոլորանվեր մասնակցություն Հայ Եկեղեցու և Մայր Հայրենիքի առաքելությանը: Անտարբերությամբ շանցնել այս երկու սրբությունների կողքով, այդ տևականորեն ներկա լինել նրանց կյանքում և վերաշինության գործին: Հեռու և վեր մնալ նեղ՝ տեղային բնույթ կրող հաշիվներից, որովհետև «հապար պատճառներ կարող են լինել մեկ

գործ չանելու համար, բայց մեկ պատճառ կարող է լինել հապար գործ անելու համար: Եվ այդ մեկ պատճառը այսօրվա մեր վերափոխվող կյանքն է, հետևաբար մենք մեկ դուրս չդնենք այդ կյանքից, այլ լծվենք տենդագին աշխատանքի Աստուծո փառքի և մեր ժողովրդի հավերժության համար»:

15 ՕԳՈՍՏՈՍ, ՀՆԳԵՍԱԹԻ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԱԳԱ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ ԵՎ «ԱՐԾՐՈՒՆԻ» ՎԱՐԺԱՐԱՆ

Սոսվոտյան ժամը 09.30-ին Վեհափառ Հայրապետն այցելեց քաղաքի արվարձան Ճյուրեսի Վարագա Սուրբ Խաչ եկեղեցի: Եկեղեցու երիտասարդ հովիվ Տ. Եղիշե քին. Նապարյանը հավատացյալների խումբերամ բազմությամբ եկեղեցու մուտքին ավանդական աղ ու հացով դիմավորեց Հայոց Հայրապետին: Այնուհետև եկեղեցում, գոհաբանական աղոթքից հետո, Սոաջնորդ Գիսակ սրբազանը հրավիրեց Նորին Արքույանն իր օրհնությունը տալու հավատացյալ ժողովրդին:



ՎԵՅԱՓԱՐ ԴԱՅՐԱՊԵՏՈՐ ԵՐԶԱՄԱՍԿԱՆԸ ՍՈՍՎՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆՆԵՐՈՎ ԵՎ
ԹԵՄԻ ԴՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՎ

Վեհափառ Հայրապետը վեր հանեց Խաչի խորհուրդը, հատկապես անդրադառնալով նաև եկեղեցու Վարագա Սուրբ Խաչ անվանը և բովանդակությանը. «Խաչը Աստուծո սիրո գործնական արտահայտությունն է: Մեր Տիրոջ խաչելությամբ Ամենակալ Աստված իր անսահման սերը ցուցաբերեց իր արարչագործության արդյունք մարդու նկատմամբ: Մենք էլ այսօր, վերցնենք այդ Խաչը և մեր սերը գործի վերածենք մեր Հայրենիքի ու եկեղեցու հանդեպ»:

Այնուհետև Նորին Սրբությունը այցելեց եկեղեցուն կից «Արծրունի» վարժարան, որտեղ, փոքրիկների կողմից ներկայացված հայտագրից հետո, աշակերտությանը դարձյալ իր պատգամը տվեց վեհափառ Հայրապետը՝ հորդորելով միշտ խանդավառ կերպով մասնակցել եկեղեցու արարողություններին և ամուր փարված մնալ հայ լեզվին ու գրականությանը, արժանավայել կերպով կրել հայրերի անունն ու պատիվը:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՊՈՂՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Ժամը 11.00-ին վեհափառ Հայրապետն այցելեց Սուրբ Պողոս եկեղեցի: Այս այցելությունը համընկել էր եկեղեցու հիմնադրության 60-րդ հոբելյանական տարեդարձին (1936 թ. եկեղեցին հիմնադրել է Գարեգին արքեպս. Խաչատուրյանը), որով հավատացյալների ուրախությունը կրկնապատկվել էր:

Եկեղեցում աղոթքից հետո երախտագիտության խոսքով հանդես եկավ եկեղեցու հովիվ Տ. Վաչգեն քահանան, որն էլ հրավիրեց վեհափառ Հայրապետին իր հայրական խոսքն ուղղելու խուռներամ բազմությանը:

Նորին Սրբությունը կոչ ուղղեց՝ միշտ այսպես աշխույժ պահել հայ կյանքը հոգևոր և ազգային իմաստով այս հեռավոր ափերում. «Թեև եկեղեցին փոքր է, բայց այն սնհուն տալածքներ կարող է ընդգրկել մեր հոգևոր կյանքի աշխուժությամբ և մասնակցությամբ»:

ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ԶԵՏԵՂՈՒՄ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ՍԱՆ ՄԱՐՏԻՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Ժամը 12.00-ին վեհափառ Հայրապետը իր հարգանքի տուրքը մատուցեց Արգենտինայի ազգային հերոս գեներալ Սան Մարտինի հիշատակին:

Քաղաքի հրապարակում գտնվող գեներալի հուշարձանի մոտ Նորին Սրբությանը դիմավորեցին պետական-պաշտոնական բարձրատիժան անձինք: Ապա հնչեց Արգենտինայի Հանրապետությանը հիմնը, որից հետո պինվորական պատվե շարասյան ուղեկցությամբ վեհափառ Հայրապետը ծաղկեպսակ պետեղեց ազգային հերոս Սան Մարտինի հուշարձանի առջև:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ «ՄԽԻԹԱՐՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ

Ժամը 12.30-ին Նորին Սրբությունը այցելեց Հայ Կաթոլիկների հովանավորության ներքո գտնվող «Մխիթարյան» վարժարան: Հարկ է նշել, որ օրեր առաջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում վեհափառ Հայրապետն ընդունել էր ուխտավորաբար Սուրբ Էջմիածնում և Մայր Հայրենիքում գտնվող սույն վարժարանի աշակերտներին, որը ծանոթության մի փոքրիկ կապ էր ստեղծել Հայոց Հայրապետի և աշակերտության միջև:

Վարժարանի սրահում ներկայացրած հայտագրի ընթացքում բարի-գալստյան և ողջույնի խոսքերով հանդես եկան վարժարանի աշակերտ-ներն ու տեսուչ Վարդան վրդ. Բեշիջյանը:

Նախ Հանուն աշակերտության իրենց հոգևոր հորը սրտի խոսք ուղղեց վարժարանի սանուհիներից Մարի Բալաֆյանը.

«Վեհափառ Հայրապետ,

Տակավիճ քանի մը օր առաջ մենք Հայաստան էինք և Սուրբ Էջմիածինի մեջ մեծ հուզումով համընդհանուր Ձեր Սուրբ Աջը: Այն ատեն մեր Մայր Հայրենիքեն ստացած մեր սքանչելի տպավորու-թյուններուն վրա ավելցած էր նաև Ձեր անձեն և Ձեր խոսքերեն եկող խոր տպավորությունները, զոր չենք կրնար բացատրել:

Հայաստանի մեջ մենք չափազանց հուզված էինք, չափազանց ազդված Հայրենիքի մարդոցմեն, բնության գեղեցկությունեն, վանքերեն, Միժեռակաքերդեն:

Այսօր ահա, իբրև Հայաստանի մեկ մասնիկը, Դուք հոս եք, Բուենոս Այրեսի մեջ, և մենք Ձեզ կդիմավորենք մեր սիրելի դպրոցին մեջ:

Բարի եկաք, Վեհափառ Տեր, և լավ, որ եկաք:

Որովհետև մենք երբեք պիտի չկարենայինք բացատրել Հայաստանի մեր ապրումները: Մեր ընկերներուն բացատրել ձեր անձին հմայքը, Ձեր ժպիտը, Ձեր հայրական խոսքերուն ու խրատներուն ույծը:

Մենք Հայաստանեն վերադարձանք ավելի գորացած և ավելի հայացած: Վստահ եղեք, երբեք պիտի չմոռանք մեր Հայրենիքը, պիտի աշխատինք ծառայել անոր մեր բոլոր կարելիություններով: Պիտի պահենք ու պահպանենք մեր լեզուն և հավատքը: Պիտի աշխատինք օգտակար ըլլալ մեր ազգին ու Եկեղեցիին, և Դուք Սուրբ Էջմիածնեն պիտի հսկեք մեզ վրա, հայրենասիրություն և ազգասիրություն պիտի սորվեցնեք մեզի:

Մենք Ձեզի շատ կյանք կմաղթենք, Վեհափառ Տեր:

Կմաղթենք, որ Աստված Ձեզի շատ ուժ տա, որպեսզի շարունակեք Ձեր սուրբ գործը:

Բարի եկաք, Վեհափառ Տեր, և լավ, որ եկաք»:

Այա, հայտագիրը ներկայացնելուց հետո, շնորհակալության և երախտիքի խոսք ասաց տեսուչ Վարդան վրդ. Բեշիջյանը.

«Աստուծո փառք կուտամ, որ անկարելին ըրավ կարելի, որպեսզի այս նվիրական պահուն գտնվեի Բուենոս Այրես, Ձեզի հետ, շատ սիրելի վարժարանիս վարչական և ծնողական խորհուրդ, տեսչական և ուսուցչական կազմ, ծնողներ և աշակերտներ, որպեսզի կարենայինք միասնաբար վայելել այս մեծ շնորհը, այս շնորհաբեր պահը, գրկաբաց և ամենայն սրտով, արցունքը աչքերնուս, երջանկության ժպիտը դեմքերնուս, խանդավառ ու անհունորեն երախտապարտ զգացումներով ընդունել ու Բարի Գալուստի անկեղծ խոսք ուղղել Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետին և իրեն ընկերակցող գերաշնորհ Սրբազան Հայրերուն և եկեղեցականներուն: Փափագս է բոլորիդ կողմեն փոխանցել Նորին Սրբությանը Բարի Գալուստի մեր խոսքը հայտնել մեր ուրախությունը և մեր անվերապահ սերն ու երախտագիտությունը հայրական և հայրապետական այցելության առիթով:

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ «Multimedios America» ՀԵՌՈՒՍՏԱԿԱՅԱՆԻ ՇԵՆՔԻ

Ժամը 17.30-ին Վեհափառ Հայրապետն օրհնեց Էդուարդո Էռնեսկյանի հովանավորած «Multimedios America» հեռուստակայանի շենքը: Ապա, իր հայրական խոսքում բարձրորեն գնահատեց այս հաստատությունը, որը խոստն վկան է հայության կյանքի բարգավաճման և վարգացման:



ՎԵՅԱԺԱՐ ԲԱՅՐԱՊԵՏՐ ԷՐՆԵՍԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԴԵՏ
ՀԵՌՈՒՍՏԱԿԱՅԱՆԻ ՇԵՆՔՈՒՄ

Նորին Սրբությունը, շեշտելով Էռնեսկյան եղբայրների կատարած աշխատանքները, հատկապես, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին անվերապահ աջակցությունը, հորդորեց, երբեք չընկրկել կամ չնահանջել այս որդեգրած ապագան և հայրենաշեն ճանապարհից:

Վեհափառ Հայրապետը դարձյալ նշեց Սահակ Խաբայան երջանկահիշատակ Կաթողիկոսի խոսքը՝ ուղղված հայության դեպի Հարավային Ամերիկա, անժանոթ վայրեր գաղթելուն, ապա ավելացրեց. «Բայց այսօր ես փստահ եմ, որ հոգեւոյս Հայրապետը երկնային բարձունքներից տեսնում ու հրճվում է այս ափերում վարգացող, առաջադիմող իր զավակների կյանքը: Ապրի՛ք, հապա՛ր ապրիք, որ հային վայել կեցվածքով ապրեցիք օտար ազգերի շարքերում և բեռ չդարձաք այս պետության ուսերին, այլ ցույց տվեցիք հայության իրական և իսկատիպ դիմագիծը, որ կնշանակի՝ աշխատանք, նվիրում և հավատարմություն: Ես ամբողջ սրտով կօրհնեմ ձեզ բոլորիդ, մասնավորաբար Էդուարդո և Սնդրանիկ Էռնեսկյան եղբայրներին և Էռնեսկյան գերդաստանի բոլոր

անդամներին: Դուք այնպես եք գործում, որ օտարները ձեզանով պիտի ասեն, թե այսպիսին են հայերը: Շարունակեք պատիվը բարձր պահել մեր ազգին, Եկեղեցուն և Հայրենիքին: Եվ Ամենաբարձրյալն Աստված օրհնի ձեզ ձեր բոլոր գործերում և աշխատանքների մեջ. Ամեն»:

16 ՕԳՈՍՏՈՍԻ, ՈՒՐԲԱԹ

Օգոստոսի 16-ին Վեհափառ Հայրապետն ավարտեց իր Հովվապետական այցելությունը Հարավային Ամերիկայի հայոց՝ Բրազիլիայի, Ուրուգվայի և Արգենտինայի երեք թեմերին: Նորին Սրբությունը իր անձի միջոցով վերաշխուժացող Սուրբ Էջմիածինը և Ապատ ու Անկախ Մայր Հայրենիքը տարավ իր հետ և կարոտակեց հայորդիներին քերականացրեց այս հոգով՝ գործունեության նոր դաշտ և իրականացման նոր տեսիլքներ պարզելով նրանց առջև:

Եվ իր «Հայրական խոսք»-ում ուղղված, Հարավային Ամերիկայի Հայոց երեք թեմերին, Վեհափառ Հայրապետը շեշտեց հետևյալը. «Մեր բնօրրան Հայաստանն ու բազմադարյա հայությունը, սակայն, անցյալի հարց չեն: Անցյալով հարուստ են, բայց անցյալ չեն: Այսօր նոր Հայաստան ենք, նորոգյալ ժողովուրդ ենք, նոր պարտավորություններ ու շախկը մեր ուսին՝ դեպի ապագա ընթացող: Գիտնանք զոհ չերթալ այնպիսի կենցաղակերպերու, որոնց մեջ կրնանք սպառելով սպառիլ...: Գիտնանք ընտրել աշխարհեն այն դրական և մնայուն արժեք ներկայացնող երևույթները, որոնք քաղաքակրթիչ և ազգակերտական ուժ ունին և վանենք այն ժխտական ապրեցությունները, որոնք մեր մեջ կապանեն մարդկային և ազգային արժեքները»:

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Օգոստոսի 18-ի վաղ առավոտյան Հարավային Ամերիկայի երկրներ կատարած իր անդրանիկ հովվապետական ուղևորությունից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձավ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Գնահատանքի խոսք ասելով իր այցելության մասին, Վեհափառ Հայրապետը նշեց, որ հեռավոր Ամերիկայի ավերում սփռված հայությունը ապրում է իր Եկեղեցուն սերտորեն կապված, հայրենիքի նկատմամբ սրտակից, շերմ զգացումներով լի: Հայն այլևս թոթափել է գաղթականությունը և հարգանք ու պատիվ է վայելում թե՛ պետական շրջանակներում, թե՛ հարավամերիկյան ժողովուրդների մեջ: Նորին Սրբությունը երախտագիտությամբ և գնահատանքով ընդգծեց տեղի իշխանությունների՝ հայ համայնքների նկատմամբ ցուցաբերած բարյացակամ և հոգատար վերաբերմունքը:

«Ես վերադարձայ նորոգումս՝ հոգիով, զօրացած՝ կամքով և առաւել ևս հայ ժողովուրդին ծառայելու հեռանկարներով, որը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր, դաստիարակչական, կրթական, վաչական վերանորոգութեան շրջանն է, և որի բարիքները պետք է զգայ մեր ժողովուրդը ամէն տեղ՝ մինչև Հարաւային Ամերիկա», եզրափակեց Ամենայն Հայոց Հովվապետը:

ԲԱԳՐԱՏ ԱՐԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ